Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2527

ԿՈՄՍԵՐԻՏՍԿԱՅԻ ՀԱՍԿՄԻՆՈՒՄԸ

ԽՍՀՄ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՊՐԱԿ 2

9(47)
Խ-11

ՊԵՏՀՐԱՏ ԵՐԵՎԱՆ
1931

30 MAY 2011

24 JAN 2006

9(47)
Խ-11

ԽՍՀՄ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՓԱՂ-ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՀԱՄԿՅԵՄ-Ի Կ. Կ. ԴԱՍԱԳԻՐՔ-ԺՈՒՐՆԱԼ

Թարգմ. Ավ. ՇԱՔԻՐՅԱՆ

ԳԵՏՀՐԱՏ 1931

10.09.2013

2527

Գեորգի տպարան
Հրատարակ. 1905
Գլավլիտ 6966 (բ)
Գաս. 5715
Տիրաժ 10.000

36740-62

ԱՇԱՀ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեր միջազգային դրությունը հասկանալու համար, հարկավոր է պարզել թե ի՞նչ է կատարվում մեզ շրջապատող կապիտալիստական յերկրներում, ի՞նչ դրություն է այնտեղ:

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Կապիտալիզմը մի այնպիսի իրավակարգ է, վորտեղ արտադրության միջոցները (այսինքն ֆաբրիկաները, գործարանները) տանեցող դասակարգը չահագործում է արտադրության այդ միջոցները չունեցող դասակարգին. կապիտալիստները չահագործում են բանվորներին, այսինքն նրանց աշխատանքից չահ (ոգուտ) են քաղում: Հարց է առաջանում, թե ինչո՞ւ բանվորն յենթարկվում է այդ չահագործմանը, ինչո՞ւ նա ստրկանում է նրա առաջ: Չահագործվում է և ստրկանում, վորովհետև արտադրության միջոցները ու գործիքները (ֆաբրիկաները, գործարանները) գտնվում են կապիտալիստների ձեռքին, իսկ բանվորը զրկված է արտադրության այդ միջոցներից. նրանը միայն բանվորական ձեռքերն են, և նա վաճառում է իր բանվորական ուժը:

Պարզ է, վոր յերբ կապիտալիստը բանվորից «ոգուտ և քաղում» նա այնքան ավելի ոգուտ կստանա, վորքան «ավելի սեղմիչ», այսինքն ստիպի բանվորին ավելի աշխատել, իսկ նրան քիչ կվճարի: Այն, ինչ արտադրում է բանվորը, նման է դավաղանի, կես արեք դավաղանը, վորքան մեծ լինի նրա մի մասը (վորը հասնում է կապիտալիստին) այնքան փոքր կլինի մյուս մասը (վորը հասնում է բանվորին): Իսկ վորովհետև կապիտալիստը շահագրգռված է, վոր իր բաժինը բանվորի աշխատանքի արտադրանքում մեծ լինի, այսինքն իր ոգուտն ավելի շատ լինի, դրա համար բանվորին թողնում է այնքան, վորպեսզի նա սովից չմեռնի և կարողանա շարունակել աշխատելը կապիտալիստի համար:

Ահա թե ինչպիսի իրավակարգ է անիծված դարլի՝ կապիտալիստական իրավակարգը. այ հարուստ է, նա շահվում է չքավորի

աշխատանքով. բանվորը (պրոլետարը) ստիպված է քաղի ու քրքրունքի մեջ կորչել կապիտալիստ-շահագործողի օգուտի համար. նա ստիպված է այդ անել, վորպեսզի սովից չմեռնի; ինչպես ասված է մեր հեղափոխական յերգում.

«Բանվորի քրտինքով ճարպակալում են վորկրատները»:

Բանվոր դասակարգի մեծ ուսուցիչ Կարլ Մարքսը դեռ ևս 50 տարի առաջ շատ լավ գրել և այն մասին, թե կապիտալիստն ինչպես է շահագործում բանվորին.—

«Դեպի վատագույն (շահն) ունեցած իր անսահման ու հույժ ճգտումով, դեպի հավելյալ աշխատանքն ունեցած իր ամբողջ դաժան ագահությամբ, կապիտալը կատաղորեն անցնում է բանվորական օրվա վոչ միայն բարոյական, հաճախ նաև ֆիզիկական սահմանները: Նա խլում, հափշտակում է բանվորի առողջության, զարգացման և ազատության համար անհրաժեշտ ժամանակը»:

Ահա սա հրաշալի յի ասված: «Գարշելի ագահություն դեպի շահը և կույր հետապնդում վատագույնի համար»: Ահա կապիտալիստական զարգացման գլխավոր գծերը: «Ինչո՞ւ համար յես պիտի պրկեցնեմ իմ վայելքը (շահը)» ահա կապիտալիստի պատասխանը բանվոր դասակարգի տանջանքներին:

Ցեվ ահա ամբողջ կապիտալիստական աշխարհում գնալով և գնում է «կույր հետապնդումը վատագույնի համար»: Կապիտալիստը ճնշում, սեղմում է բանվորին, ստիպելով նրան ուժերից վեր աշխատել (սա կոչվում է «կապիտալիստական ռացիոնալացում»): Կապիտալիստը մացնում է նոր, կատարելագործված մեքենա, վորպեսզի հաղթի ու վոչնչացնի իր ախոյանին—կապիտալիստին, իսկ ինքն էլ ավելի հարստանա: Կապիտալիստներն աշխատում են վորքան կարելի յե շատ ապրանք հանեն շուկա, վորպեսզի (շատ) մեծ ոգուտներ ստանան, այդ պատճառով էլ նրանք շուկայի համար իրար միս են կրծում. մի յերկրի կապիտալիստները գզվում են ուրիշ յերկրի կապիտալիստների հետ (իմպերիալիստական պատերազմի գլխավոր պատճառը կարևոր շուկաներ հափշտակելու ցանկությունն ե՝. միլիոնավոր աշխատավորներ մեռան, ասենք միլիոնավոր մարդիկ հաշմանդամ դարձան դեպի վատագույն ունեցած կապիտալիստների «գայլի ագահության» պատճառով):

«Ինչ գնով էլ լինի մեծ ոգուտներ պրկել ու հարստանալ»: Ահա կապիտալիստների մշտական ծարավը: Իսկ դրա համար հարկավոր է նախ և առաջ ավելի ամուր սեղմել բանվոր զանգվածին, այսինքն յերկարացնել բանվորական օրը, իջեցնել աշխատավարձը: Ուրիշ խոսքով ասած—«կապիտալիստների դասակարգի ճիմական շահերը հարկադրում են նրանց բանվոր դասակարգին պահել կարիքի ու ազգատության մեջ:

Բայց այստեղ է ահա, վոր կապիտալիզմը հանդիպում է մահաբեր դժվարություններին. առաջինը՝ բնական է, վոր բանվոր դասակարգը թույլ չի տա կողոպտել իրեն, կապիտալիստների դրպանը հարստացնելու համար: Բանվորը պայքարում է կապիտալի հարձակման դեմ, բանվոր դասակարգի մեջ ծավալվում է հեղափոխական շարժումը, սրվում է պայքարը կապիտալիստների դասակարգի և բանվորական դասակարգի միջև: Ցեվ յերբորդ՝ կապիտալիստն էլ ավելի մեծ քանակությամբ ապրանք է հանում, շուկա, իսկ ո՞վ կգնի: Զե՞ վոր ազգաբնակության հիմնական մասսան, այսինքն բանվորները ու ամենաչքավոր գյուղացիները կիսաքաղց են ապրում: Մի՞թե նրանք կարող են իրենց աղքատ դրությամբ գնել այդ ապրանքը: Դրա համար էլ կապիտալիստների մոտ յերևան են գալիս անհաղթահարելի դժվարություններ, ճգնաժամեր. ապրանքները մնում են պարկած ֆաբրիկայում, գործարաններում, խանութներում, իսկ ապառում չկա. պարենը փտում է, իսկ ոգտագործող չկա, վորովհետև գնելու հնարավորություններ չկան:

Աշխատավորության խոշոր զանգվածը կարիքի և ազգատության դատապարտող կապիտալիզմը ինքն իրեն հեռամաս փոն է փորում:

Հենց այդպիսի ճգնաժամ ակավել է այժմ համարյա ամբողջ բուրժուական աշխարհում: Ապրանքները պարկած են, իսկ ապառում չկա: Ֆաբրիկանները ու գործարանները փակվում են: Ինչու համար նոր ապրանքներ արտադրել, յեր յեղածներն էլ պարկած են պահեստներում: Բանվորների մեջ անում է գործազրկությունը: Ցարի բշտիկների նման պայթում են ձեռնարկները մեկը մյուսի յետևից: Կապիտալիստները դեռ ու դեռ են ընկնում, կատաղում, թայց ճգնաժամից (դուրս գալու) ազատվելու վոչ մի յելք չեն գտնում: Ցեվ այդպիսի յելք չկա կապիտալիստական իրավակարգում: Մեր Խորհրդային պետության մեջ այդպիսի ճգնաժամ «գերարտադրությունից» չեր էլ կարող լինել. մենք, ընդհակառակը, ճգտում ենք վորքան հնարավոր է շատ մթերք ու պարեն արտադրել, վորովհետև դրանից շահվում է բանվորի և աշխատավոր գյուղացու կյանքը: Վորովհետև մեզ մոտ վոչ մի կաթիլ քրտինքով չի «գերանում» վոչ մի վորկրատոր. մենք աշխատում ենք վոչ թե

կապիտալիստների, այլ մեզ համար։ Ինչքան շատ ենք արտադրում, այնքան բոլորս էլ լավ ենք ապրում։ Բոլորովին ուրիշ է «դայլի»-կապիտալիստական հասարակության մեջ։ Այնտեղ կապիտալիստը արտադրում է (ստիպում է բանվորին արտադրել) իր շահի համար, իսկ բանվորներին պահում է «քաղցի ու մերկության մեջ»։ Խանութների դարակները կտրվում են պարկած մնացած ապրանքներից, իսկ բանվորը և չքավոր գյուղացին մահ են գալիս տկլոր ու բոբիկ։ Ցեվ կապիտալիստը վոչ մի կերպ չի կարողանում յելք գտնել։ Յեթե բարելավի բանվորների դրությունը (բարձրացնի աշխատավարձը, հնարավորություն տա նրան լավ ապրել ու սնվել), դրանով կնվազեցնի (կպակասեցնի) կամ նույնիսկ կվոչնչացնի կապիտալիստի շահը։ Իսկ ինչպես մենք տեսանք, դեպի շահն ունեցած «դայլի ագահության» վրա յե հիմնված կապիտալիստական հասարակությունը։ Վոչնչացնել կապիտալիստի շահերը, նշանակում է վոչնչացնել կապիտալիզմը։ Այդ բանին կապիտալիզմը վոչ մի դեպքում չի համաձայնվի և չի յել կարող համաձայնվել։

Իսկ ճգնաժամը հրդեհի նման եկ ավելի յե բորբոքվում և տարածվում է։ Արտադրությունը կրճատվում է. շահի իջնելու պատճառները ամում և նույնիսկ մնացած ձեռնարկներում։ Կապիտալիստական գրպանը վտանգի մեջ է և բոլոր յերկրների կապիտալիստները միացյալ հեղեղով (հոսանքով) ուղղվում են մեկ սերված ուղղությամբ. եկ ավելի սեղմել բանվորներին, եկ ամուր պատաղել նրանց վզին կեղեքման պատուտակը։

Ցերկարացնել բանվորական օրը, կրճատել աշխատավարձը, ուժեղացնել բանվորների և չքավորագույն գյուղացիների հարկերը, չքավոր-գյուղացիներին գրկել հողից—ահա այն ուղիները, որով բոլոր յերկրների կապիտալիստները ցանկանում են մեղմել ճգնաժամը։ Բայց ուժեղացնելով արշավը բանվոր դասակարգի և չքավորագույն գյուղացիության վրա, կապիտալիստները դրանով ավելի ևս վատացնում են իրենց դրությունը, խորացնում են ճգնաժամը. այն ժամանակ աշխատավորությունն ավելի քիչ ապրանք ու պարեն կգնի, ձեռնարկները կփակվեն ապրանքների պատման համար չունակ չլինելու պատճառով։ Դրանով կապիտալիստներն ուժեղացնում են բանվոր դասակարգի և ամենաչքավոր գյուղացիության դժգոհությունը, իրենք են գրգռում նրանց դեպի պայքարը։

Կարող է պատահել պակաս գիտակցության տեր վորևե բանվոր կամ գյուղացի հույս ուներ «խուլ տալ» հեղափոխական պայքարից. «կարող է պատահել վորևե կերպ կարգվի»։ Իսկ այստեղ նույնիսկ պակաս գիտակցության տեր բանվորն ու չքավոր գյուղացին տեսնում են, վոր խուլ տալ վոչ մի կերպ հնարավոր չէ. կապիտալիստը հուպ է տալիս, հարկավոր է պաշտպանվել։ Ահա թե ինչու ճգնաժամի հետ միասին հեղափոխական շարժումն ամում է բուրժուական յերկրների բանվորության մեջ. տարածվում են գործադուլները, մի յերկրից տեղափոխվում, անցնում են մի ուրիշ յերկիր, տեղի յեն ունենում բանվորների մշտական ընդհարումներ վոստիկանության հետ քաղաքների փողոցներում, բանտերը լցված են հեղափոխականներով, կախում և գնդակահարում են հեղափոխականներին (ուժեղանում է սպիտակ տերրորը), խորմորոմն սկսում է ընդգրկել նաև չքավորագույն գյուղացիներին։ Անում է կոմունիստական կուսակցության ազդեցությունը, վորովհետև բանվորը քանի գնում ավելի ևս պարզ է հասկանում, վոր իր փրկությունը կոմունիզմի մեջն է։ Տնտեսական ճգնաժամն ավելի ամում է և վերածվում քաղաքական ճգնաժամի։ Հեղափոխությունը մոտենում է։

ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ԹԱԼԱՆՆ ՈՒԺԵՂԱՆՈՒՄ Է

Կապիտալիզմը չի կարող ապրել առանց կողոպտելու իրեն ենթակա ազգությունների տակ գտնված գաղութների ժողովուրդներին (ազգերին), այսինքն այն յերկրները, վորտեղ ապրում են յետամնաց ժողովուրդներ (ազգեր), վորոնց հեշտ է կեղեքել (չահագործել)։ Նայեցեք աշխարհագրական քարտեզի վրա Մեծ-Բրիտանիային (Անգլիային). Անգլիայի պետական զինանշանը «մռնչացող առյուծ» է։ Ի՞նչ խոսք, վոր սոսկալի գազան։ Բայց նայեցեք, թե վո՞րտեղ է տեղավորված այդ «սոսկալի մռնչացող առյուծը»։ Ցերկու փոքրիկ կղզիների վրա, վորոնց մեծությունը հավասար է Մոսկվայի հին նահանգի մի գավառին։ Ահա և ամբողջ «մռնչացող առյուծը»։ Բայց նայեցեք թե ո՞ւր են ձգվել փոքրիկ կղզիների վրա տեղավորված այդ կապիտալիստական սարդի չոչափուկները։ Բառացի՝ դեպի աշխարհի բոլոր մասերն առանց բացառության. և՛ Աֆրիկա, և՛ Ասիա, և՛ Ամերիկա, և՛ Ավստրալիա և, իհարկե, Ցեվրոպա։ Ի՞նչ կլինի, յեթե կտրվեն այդ սարդի չոչափուկները։ Նա հենց վաղը կատկի իր փոքրիկ կղզիների վրա։

Այսպիսով կապիտալիզմը չի կարող գոյություն ունենալ ա-

ռանց գաղութները չահագործելու (անգլիացիք՝ առանց Հնդկաստանի, Եգիպտոսի և ուրիշ յերկրների, Ֆրանսիացիք՝ առանց Սիրիայի, Մարոկկոյի և ուրիշ յերկրների)։ Կապիտալիստները գաղութներում ունեն լայնածավալ շուկաներ իրենց ապրանքները ապառելու համար. գաղութներում նրանք ունեն եժան բանվորական ուժ, վորը կարող են չահագործել այնպես, ինչպես թույլ չեն տալ անելու յեվրոպական բանվորները։ Չէ՞ վոր Չինաստանում կապիտալիստները լծում են չինացի բանվորներին այդ բառի իսկական իմաստով. յերկանիվ կառքին և լծվում չինական պրոլետարը (կուլին), կապիտալիստը նստում է կառքը և ձիու նման մտրակելով քշում չինացուն։ Ահա թե ինչ ասելիանի յե հասել գաղութային սարուկների չահագործումը։ Նրանց բանվորական օրն ունի ավելի յերկար և, իսկ աշխատավարձը բոլորովին աղքատ, անհունդն անասելի։ Ահա թե ինչու կապիտալիստներն այդպես պաշտպանում են գաղութները, և այդպես իրար ոչխ կրծում գաղութների համար։ Ահա ինչու գաղութների յեռևից. ընկնելը (ապառման շուկաների, եժան բանվորական ուժի և այդ գաղութների բնական հարստությունների համար) կախված է վորպես պատերազմի մշտական ապառնալիք. ահա ինչու կապիտալիզմի պայմաններում հաստատ (կայուն, ամուր) միջազգային խաղաղություն չի կարող լինել։ Քանի դեռ կենդանի յե կապիտալիզմը, խաղաղության մասին կապիտալիստների բոլոր խոսակցությունները առանց խորության կեղծավորություն ե և խաբեություն։ Քանի դեռ գոյություն ունի կապիտալիզմը, ոչը մշտական լցված և վառոդի հոտով։ Իսկ ճգնաժամն ավելի ևս սրում է շուկաների յեռևից ընկնելը, գաղութների համար ծեծկվոցը։ Ահա ինչու ճգնաժամն ել ավելի սրում ե պատերազմի սպառնալիքը։

Բայց չէ՞ վոր կապիտալի գաղութային սարուկները յերբեք չեն ցանկանում հավիտյան լծվել ու տանել կապիտալիստներին։ Նրանցում նույնպես աճում ե դիմակցությունը, ավելի պարզ զատում նրանց դասակարգային շահերը։ Գաղութային ժողովուրդներն ավելի յեն աշխատում ազատել ոտարերկրյա կապիտալիստներից-իմպերիալիստների լուծը։ Մեր աչքի առաջ փոթորկում ե հեղափոխությունը Չինաստանում, հուզումներ կան Հընդկաստանում, Ֆրանսիական իմպերիալիստներն իրենց պատժիչ ջոկատները չեն հանում Սիրիայից ու Մարոկկոյից, չնայած մասայական դնդակահարություններին, հուզումներն այնտեղ չեն դադարում։ Այժմ արդեն չկա մի գաղութ, վորտեղ չլինի բանվորների ու չքավորագույն գյուղացիների դժգոհությունը։

Առանձնապես անհանգստացած են կապիտալիստները Չինաստանի գործերի դրությամբ։ Չինաստանը միակ յերկիրն ե աշխարհում, վորն իր ազգաբնակության թվով գերազանցում ե մեզ. մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում ներկայումս հաշվվում ե մոտ 162 միլիոն բնակիչ, իսկ Չինաստանում ազգաբնակությունը 400 միլիոնից ավել ե։ Մի բան կա, վոր կապիտալիստներն այդպես հուզվում են։ Շատ հաղորդելու, թալանելու բան կա։ Արի տես վոր Չինաստանին ե նայում Հնդկաստանը և հուզվում, Յեգիպտոսն ե նայում և փոթորկում. նայում են մի շարք գաղութներ և յեվրոպական կապիտալիզմից կախում ունեցող յերկրներ և նրանցում աճում և զարգանում ե հեղափոխական շարժումը։ Կապիտալիստները հասկանում են, վոր Չինաստանի դաշտերում վորոշվում ե վոչ միայն այդ 400 միլիոնանոց ժողովրդի բախտը, վոչ միայն արեվելքի ժողովուրդների ու գաղութների բախտը, այլ և միջազգային կապիտալիզմի բախտը։

Ահա թե ինչու միջազգային բուրժուազիան սպառազինվել և Չինաստանի դեմ, ահա թե ինչու այսպիսի կատաղությամբ հարձակվում ե նա չինական ժողովրդի վրա, հեռաձիգ թնդանոթներով այրում խաղաղ քաղաքները, սպանում կանանց, ծերերին ու չքավորներին։

Զնայելով միջազգային իմպերիալիզմի այդ բոլոր գազանություններին և հեղափոխական շարժումից վախեցած չինական բուրժուազիայի դավաճանության, չինական կարմիր բանակն առաջանում և իմպերիալիստներից և չինական կապիտալիստներից քաղաքը քաղաքի յեռևից, գավառը գավառի յեռևից. Ներկայումս ինչպես իշխանության կարմիր դրոշակի տակ Չինաստանում այժմ ապրում են մի քանի տասնյակ միլիոն բնակիչներ։ Աճում և ամրանում ե չինական կոմունիստական կուսակցությունը։ Դժվար ե չինական բանվորի և գյուղացու կռիվը, բայց հաղթությունը, չնայած ժամանակավոր պարտության, այնուամենայնիվ նրանցը կլինի. և այն ժամանակ կլինի միջազգային կապիտալի գլխավոր հենարանը, այն ժամանակ կբացվի լայն ճանապարհը դեպի համաշխարհային Հոկտեմբերը։

ԻՆՉՈՒ ՍՐՎԵՑ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ-Ի ԴԵՄ.

Այն բոլորից, ինչ մենք վերն ասինք կապիտալիստական աշխարհի մասին, պարզ կլինեն միջազգային բուրժուազիայի ատելության աղբյուրները, վոր նա տածում է դեպի Խորհրդային Միությունը: Նրանց մոտ ճգնաժամ է, արտադրության անկում. Գերմանիայում արտադրությունն ընկավ անցյալ տարի 8%-ով, Միացյալ Նահանգներում 10%-ով, Լեհաստանում 15%-ով և այլն: Մեզ մոտ, ընդհակառակն, արտադրությունը բուռն թափով աճում է. միայն 1931 թ. մենք կուներենք արտադրության 45%-աճում, այսինքն, համարյա մեկ և կես անգամ: Ի՞նչպես չկատաղեն նրանք: Նրանց մոտ փակվում են ձեռնարկները ճգնաժամի հետևանքով, իսկ մենք միայն 1931 թ. գործի յենք գցում 518 նոր ձեռնարկներ, ընդ վորում մենք կառուցում ենք վոչ թե փոքրիկ գործարաններ, այլ խոշոր ձեռնարկներ. այս տարի սկսում է աշխատել Մագնիտոգորսկի գործարանը, վորը մոտակա տարիներում մեզ կտա այնքան մետաղ, վորքան տալիս էին բոլոր գործարանները միասին 1913 թվին: Ինչպես չկատաղեն, չզազազեն կապիտալիստները: Նրանց մոտ ճգնաժամի հետևանքով աճում է գործազրկությունը, ամենահամեստ հաշվով նրանց մոտ այժմ կա 35 միլիոն գործազուրկ. յեթե վերցնենք սովորական հաշիվը, այն է, վոր յուրաքանչյուր գործազուրկի ընտանիքը բաղկացած է միջին հաշվով 2-3 հոգուց, ապա մենք կտեսնենք, վոր 100 միլիոնից ավելի մարդ տանջվում է գործազրկության սարսափներից կապիտալիստական աշխարհում:

Իսկ այնտեղ գործազուրկն ու նրա ընտանիքը գտնվում են իրոք սոսկալի դրության մեջ: Այնտեղ վոչ ամենուրեք գոյություն ունի պետական թեկուզ փոքրիկ ոգնությունը. յերկրներից մեծ մասում գործազուրկը մուրացկան է, նա ապրում է վողորմությամբ, վորը կրաբեհաճի տալ բարեգործն իր չաղ դրպանից: Դա այն չե, ինչ մենք մոտ, Խորհրդային պետության մեջ, վորտեղ գործազուրկն ստանում եր և ստանում է նպաստ միջին աշխատավարձի չափով: Այնտեղ գործազուրկը մուրացկան է, վորն իր յերեխաների հետ գիշերներն ընկած է քաղաքային այդիների, նրա-տարանների վրա, մինչև վոր վոստիկանը կվռնդի նրան, յերեխաների հետ քնում է չքեղ պալատների սանդուխքների վրա, մինչև վոր ճարպակալած գռնապանը կոշիկներով դուրս կհրի նրան փողոց:

Ահա ինչ է նշանակում գործազրկությունը կապիտալիստական աշխարհում:

Բացի դրանից, գործազրկությունը դժբախտություն է վոչ միայն գործազուրկների, այլ և աշխատանք ունեցողների համար: Իսկ ինչո՞վ է ապահովված աշխատանք ունեցողը, վոր վաղն ինքը ճուլնպես փողոց չի չպրտվի արտադրության կրճատման պատճառով: Ճգնաժամի հետևանքով կկանգնի նրա ձեռնարկը կամ կըփակվի բաժանմունքը, և ինքը կդլորվի գործազուրկների շարքերը:

Բայց սա յել դեռ բոլորը չե. գործազրկությունը կապիտալիստական աշխարհում չարիք է բանվոր դասակարգի դեմ կապիտալիստների ձեռքում: Գործազուրկ յեղավ, կապիտալիստն անմիջապես արձակում է բանվորներին: Հեղափոխական բանվորին նա դուրս է շպրտում գործարանից, վոչինչ, փոխարինողներ կգտնվեն քաղցած գործազուրկներից: Ահա թե ի՞նչ դժվարություն է ըստիպված լինում հաղթահարել բանվոր դասակարգը կապիտալիստների դեմ մղվող պայքարում: Ահա թե գործազրկությունն ի՞նչ անեծք է բանվոր դասակարգի համար:

Իսկ մենք, բանվոր դասակարգի համար այդ անեծքը, վոչընչացրել ենք: Մենք վերջացրել ենք գործազրկությունը (վերացրել ենք նրան): Մեր բուռն ծավալվող շինարարության պայմաններում, մենք ընդհակառակն, բանվորական ձեռքերի կարիք ենք զգում: Ահա թե ինչպիսի համաշխարհային հրաշք կատարեցինք մենք: Փորձեցեք պատահած յեվրոպական կամ ամերիկական բանվորի ասել՝ «ընկեր, մենք արդեն վոչնչացրել ենք գործազրկությունը»: Միայն այդ միքանի բառով նա ավելի շատ կհասկանա մեր հաջողությունների մասին, քան ամենամանրամասն զեկուցումներից, վորովհետև նա իր անձնական փորձով գիտե, թե ինչ է նշանակում գործազրկություն բանվորի և նրա ընտանիքի համար:

Բայց չե՞ վոր այդ մասին ավելի շատ են իմանում արտասահմանյան բանվորները: Ինչպես եվ նրանցից թաղցկում են ճշմարտությունը մեր մասին, ինչքան եվ ատում և բամբասում են մեզ բուրժուական թերթերը, անյուամենայնիվ ճշմարտությունը հասնում է միջազգային պրոլետարիատին: Բանվորներն ասում են. «Այո, մեզ մոտ գործը գլորվում է դեպի ցած, դեպի անդունդը,

մեր դրությունը վատթարանում է, իսկ Խորհրդային Միության մեջ աշխատավորության, բանվորների և գյուղացիների դրությունը լավանում է. ահա նրանք նույնիսկ վերացրին գործադրությունը: Իրոք վոր պետք է գնալ Խորհրդային Միության բանվորների և գյուղացիների ճանապարհով, պետք է տապալել կալվածատերերի և կապիտալիստների լուծը, պետք է պատրաստել սոցիալական Հոկտեմբերը»: Բուրժուազիան գիտե այդ, նա տեսնում է, վոր համաշխարհային Հոկտեմբերը մոտենում է, վոր մեր սոցիալիստական շինարարությունն առաջ է գնում, դրա համար էլ նա կատաղում է մեր դեմ:

Վերջապես մենք տեսանք, թե ինչպես աճում է հեղափոխական շարժումը դաղութներում և յեվրոպական կապիտալիզմից կախում ունեցող յերկրներում: Ինչքան էլ վոր ընկճված է խավարի և այնտեղ ապրարնակությունը, ինչքան էլ վոր խարում են նրան իմպերիալիստները, այնուամենայնիվ վորոշ ճշմարտություններ հասնում են այդ յերկրների ամենախուլ անկյունները: Ցերը լցված շինական կուլին լցված սայլակին տանում է իմպերիալիստին, իսկ վերջինս մտրակում և նրան ձիու պես, նույնիսկ այդ «ձի-մարդուն» դլխի մեջ մխոք է ծագում—«Աիր աշխարհի յերեսին մի յերկիր կա, վորտեղ չկա ջահագործում, վորտեղ չկա ազգային ճնշում, վորտեղ բոլոր ազգերի աշխատավորները միանման հավասար իրավունքներ ունեն: Այդ յերջանիկ յերկիրը, վորտեղ վոչ մի բուրժույ չեր համարձակվի ինձ լցել ու գրոսնել, դա Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունն է, և նրա վրա ծածանվում է բանվոր գասակարդի պայքարի կարմիր դրոշակը»: Ցերը հնդիկն աշխատում և յեղեղնատում և նրան մտրակով հարվածում (չրպպացնում) է անգլիական իմպերիալիզմի կողմից նշանակված վերակացուն, նա ևս մտածում է այդ մասին: Մի խոսքով կապիտալի գաղութային ստրուկները չեն կարող չմտածել Խորհրդային Միության մասին, իսկ սա նշանակում է չեն կարող չմտածել սոցիալիստական հեղափոխության և գասակարդային պայքարի այն ուղիների մասին, վորոնցով անցանք մենք: Ահա թե ինչպես վորտեղից և բղխում միջազգային բուրժուազիայի ատելությունը դեպի մեզ: Ահա ինչու նա առանձնապես կատաղում է մեր դեմ, յերբ գաղութներն սկսում են հուզվել:

Մանրագույն ճշտությամբ, վորն ապրում է այժմ կապիտալիստական աշխարհը և սոցիալիստական շինարարության հաջողությունները մեզ մոտ,—ահա ինչ է վորոշում այժմ մեր հարաբերությունները բուրժուական աշխարհի հետ:

Համաշխարհային բուրժուազիայի մեր դեմ ունեցած միացյալ ճակատի այդ ընդհանուր կանվայի վրա կան նշանակալից տարբերություններ առանձին բուրժուական պետությունների և նույնիսկ միևնույն պետության մեջ բուրժուազիայի առանձին խմբերի մեջ, մեր նկատմամբ: Այսպես օրինակ, դերմանական կառավարությունը մեզ հետ կանոնավոր արտաքին (դիպլոմատիական) հարաբերություն է պահպանում, մեզ հետ կանոնավոր առևտուր է անում, նույնիսկ առևտուրը վարում է ապառիկ: Իսկ Ֆրանսիական կառավարությունը, ընդհանրապես, յեռում է չարությունից (բարկությունից): Նա հանդիսանում է Խորհրդային Միության դեմ պատերազմ պատրաստելու գլխավոր սկզբնապատճառը: Ինչո՞ւմն է տարբերությունը: Զե՞ւ. վոր թե Ֆրանսիայում և թե Գերմանիայում բուրժուական կառավարություններ են:

Տարբերությունը հետևյալումն է: Գերմանիան հաղթվել էր իմպերիալիստական պատերազմի ժամանակ: Հաղթող յերկրների միությունը (այսպես կոչված Անտանտան) մինչև այժմ էլ կողոպտում է Գերմանիային: Մոտակա 10 տարվա մեջ Գերմանիան պետք տալիս է վճարի հաղթողներին 20 միլիարդ մարկ, այսինքն 10 միլիարդ ռուբլի: Տարեկան 2 միլիարդ: Գերմանական կառավարությունը վոչ բանեցից վերցնի այդ փողը, և այն էլ տնտեսական ճգնաժամի աչս ուժեղացման պայմաններում: Բանվորների և գյուղացիների ջահագործումն ուժեղացնելով, վորը գործադրում է գերմանական բուրժուազիան ճգնաժամը թեթևացնելու համար, բան դուրս չի գա: Մնում է առևտուր անել ԽՍՀՄ-ի հետ, առավել ևս, վոր մեր կարմիր վաճառականները, ամենապարտաճանաչ պարտք վճարողներն են աշխարհում: Մենք չենք դիմում կապիտալիստների ստրկական չարչիական իմաստության՝ «չխարես, չես ծախի»:

Մեզ հարկավոր է մեր նոր կառուցվող ֆաբրիկների և գործարանների համար հումավորում, վորը մենք դեռ ևս չենք արտադրում մեզ մոտ. մեզ հարկավոր են տրակտորներ, վորը մենք դեռ ևս բավարար թվով չենք արտադրում մեր տրակտորային գործարաններում: Դրա համար՝ շատ բան, վորը մեզ հարկավոր է և վորը մենք առայժմ չենք արտադրում, գնում ենք արտասահմանում, այսինքն, պատվերներ ենք տալիս: Իսկ դա անհրաժեշտ հայ է գերմանական բուրժուազիայի համար, վորի կսիրդին և հասել կապը, վորին խեղդում է Անտանտան: Դա նրա համար շատ

լավ միջոց է թուլացնելու ճգնաժամը, պահելու արտադրությունը։ Եվ նա առևտուր է անում մեզ հետ, սահմանում է մեզ հետ «նորմալ հարաբերություններ»։ Իհարկե, ինչպես ամեն մի բուրժուազիա, այնպես էլ նա, տանել չի կարողանում, առում է կոմունիզմը, դրա համար յերբեմն նա յել աշխատում է վորևե բան սարքել մեր դեմ, մասնակցել իմպերիալիստների մեր դեմ ունեցած դավադրությանը, յերբեմն նա դեմ չե սիրաբանելու Անտանտայի հետ, թե՝ «յեթե վերջ կապը թուլացնեք, յես իմ հարաբերությունները կկտրեմ բայշևիկների հետ»։ Բայց, իհարկե, առայժմ նրան ձեռնտու չե գործ ունենալ մեզ հետ, քան իր դահիճների, Անտանտայի յերկրների կառավարությունների հետ։

Ուրիշ բան է Ֆրանսիան։ Նա հաղթող է։ Նա ամենից քան է ծծում գերմանական ժողովրդի արյունը։ Գերմանիայի պատերազմական պարտքերը մտնում են գլխավորապես Ֆրանսիական կապիտալիստների դրպանը, բացի դրանից, Ֆրանսիայում հատուկ աղդեցություն, կշիռ ունեն բանկիր-վաշխառուները։ Այդ նրանք են, որ գլխավորապես (պարտք) փող տալիս թագավորին. այդ նրանք են, որ կոչել են մեզ, թե՝ «վերադարձեք թագավորական պարտքերը»։ Իսկ յերբ մենք նրանց պատասխանում ենք—«Ո՞վ է ձեզնից պարտք վերցրել, թագավո՞ր, ահա ձեզ նրա հասցեն պարտքերն առանալու համար—մյուս աշխարհը, նախկին թագավոր Նիկոլայն», նրանք կատաղում են և մոլեգնում. նրանք են ԽՍՀՄ-ի դեմ արշավի գլխավոր խրախուսողները։

Նույնիսկ միևնույն բուրժուական յերկրում, բուրժուազիայի տարբեր շերտերն ու կուսակցությունները տարբեր վերաբերմունք ունեն դեպի Խորհրդային Միությունը։ Այսպես որինակ, Անգլիայում «ազնվական» պահպանողականները, վորոնք ներկայացնում են խոշոր հողատիրական և միջազգային հարաբերությունների մեջ արդյունաբերական բուրժուազիայի թալանչիական թևի շահերը, փրփրում և կատաղում են մեր դեմ։ Ընդհակառակն, նարերական բուրժուազիան, կողմնակից են ԽՍՀՄ-ի հետ առևտրական հարաբերություններ պահպանելուն։

Իհարկե չի կարելի չգերագնահատել բուրժուազիայի վերոհիշյալ տարբերությունը և բուրժուազիայի այս կամ այն խմբի հետ ամուր ու հարատև խաղաղության հույսեր դնել։ Հենց վոր սոցիալական հեղափոխության ամպը վորոտա, ինչպես առում են «բոլոր կատները մոխրագույն կդառնան», այսինքն՝ միջազգային բուրժուազիան միայյալ ճակատով դուրս կգա միջազգային պրոլետարիատի և նրա ամրոցի—Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության դեմ։

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ԻՆՉ ՄԻԶՈՑՆԵՐՈՎ Ե ՓՈՐՁՈՒՄ ՄԵԶ ԽԱՆԳԱՐԵԼ

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո միջազգային իմպերիալիստները փորձեցին բոլոր միջոցները, վորպեսզի մի կերպ վոչնչացնեն Խորհրդային Իշխանությունը, նորից տիրացնեն կապիտալի լուծն իրենց վրայից խորտակած բանվորներին ու գյուղացիներին, անհաջողության մատնեն սոցիալիստական շինարարությունն ու մեր հեղափոխակը։

Հոկտեմբերից հետո իմպերիալիստներն ոգնում եյին ռուս գեներալներին, կալվածատերերին ու կապիտալիստներին, վորպեսզի վերականգնեն հին կարգերը։ Ինչքան էլ յերիտասարդ եր այն ժամանակ Խորհրդային Իշխանությունը, այնուամենայնիվ քանվորներն ու չքավորագույն գյուղացիները սվիններով յետ մղեցին թշնամուն։

Իմպերիալիստներին չհաջողվեց հարձակվել ուղղակի ճակատից, դրանից հետո նրանք դիմեցին զարտուղի ճանապարհներով, յերբեմն բուրժուական հակահեղափոխականների ապստամբություններ եյին սարքում ԽՍՀՄ-ի ներսում, յերբեմն պրովոկացիաներով դրաղվում. (մեզ պատերազմի մեջ քաշում)—հարձակվում մեր արտասահմանյան ներկայացուցիչների վրա, միքանիսին (Վորովսկուն, Վոյկովին) նույնիսկ սպանեցին։

Սրա հետ միաժամանակ ռազմական պատրաստություններ եյին տեսնում, և պատրաստվում են այժմ հարձակվելու ԽՍՀՄ-ի վրա. տարածված եյին ամենահիմար բամբասանքներ (որինակ՝ իբր Թրայշևիկներն որը ցերեկով, Փարիզի ամենամարդաշատ փողոցներից մեկում գողացան սպիտակ գեներալ Կուտեպովին), պատը «խաչակրաց արշավանք» և հավաքում (կազմակերպում) ԽՍՀՄ-ի դեմ. աշխատում են խանգարել մեր ապրանքների արտահանությունն արտասահման, դժվարացնում են մեր առևտրական և դիպլոմատիկական հարաբերությունները. մեր յերկիրն են ուղարկում լրտեսներ ու վնասարարներ։ Բայց վոր ամենից կարևորն է, միջազգային բուրժուազիան չկարողացավ սվիններով մեզ չոչափելը

միաքը. չինական սահմաններում չին գեներալներն ու ռուս սպիտակ գվարդիականները հարձակվեցին սահմանակից մեր խաղաղ գյուղերի վրա, այրեցին տները, անկարգություններ արին բնակիչների հետ, այսինքն, ակնհայտ կերպով մեզ պատերազմի յենք կանչում: Բայց բոլորն իզուր. կառավարության հրամանի համաձայն հեռավոր արևելյան փառապանծ բանակը շատ լավ դուռ տվեց հեռավոր արևելյան մեր սահմանների վրա և միանգամ ընդմիշտ ցույց տվեց ամբողջ աշխարհին, որ Խորհրդային կառավարությունն ու Կարմիր բանակը վոչ վոքի թույլ չեն տա անկարգություններ անել Խորհրդային սահմանների վրա:

Ինչպես բուրժուական դամբռների (չների) վոռնոցին, զբաղմունքներին ու պրովոկացիաներին, մենք սոցիալիզմ ենք կառուցում մեր յերկրում. մենք հաջողությամբ կառարում ենք հնգամյակը, մենք ամրանում ենք: Սրա հետ վոչ մի կերպ չի կարողանում հաշտվել միջազգային բուրժուազիան և մասնավորապես Ֆրանսիականը, որն ինչպես ասացինք, միշտ ել ամեն սեռակ չարիքների սկիզբն և յեղել մեր դեմ: Բուրժուազիան վնասարարներ և կազմակերպում մեր միջից, ոռճիկ տալիս նրանց, որպեսզի նրանք ամեն կերպ խանգարեն մեր շինարարությունը, իսկ Ֆրանսիական գլխավոր շտաբը Խորհրդային Միության վրա ռազմական հարձակման պլանն և մշակում: Մանրամասն ամեն ինչ նախատեսված ել; թե գլխավոր հարվածն ո՞ւմը հասցնել (իհարկե կարմիր մայրաքաղաք Մոսկվային), վնասարարներից վո՞րին մինչև որ գործենել, Խորհրդային Միության նավթային հարստությունները (Բաքուն, Գրոզնին) տալ Ֆրանսիական կապիտալիստներին, ածիլանը՝ (Դոնբաս, Կուզբաս) անգլիականին: Մի խոսքով բոլորը մտածված ել, որպեսզի վերադարձնել «հին տերերին-կալվածատերերին (որպեսզի նրանք խլեին հողը գյուղացիներից և վոչնչացնեին կոլտնտեսությունները ու խորհտնտեսությունները), կապիտալիստներին (որպեսզի նրանք խլեին բանվորներից ֆաբրիկաներն ու գործարանները և վոչնչացնեին սոցիալիստական արդյունաբերությունը): Բայց... թշնամիները սխալվեցին իրենց հաշիվների մեջ: Խորհրդային Միության հավատարիմ ու արթուն պահակ ՄԳԲՎ-ն իր ժամանակին բռնեց վնասարարների ոճիրից, բանտ նստեցրեց և վնասարարները ղղեցին ամեն ինչ և բացին հարձակման ամբողջ պլանը: Նույնը յեղավ նաև միջազգային բուրժուազիայի մյուս գործակալների-մենշևիկների հետ. նրանք ել բանտ ընկան չնորհիվ ՄԳԲՎ զգոնության ու շատ բան պատմեցին այն մասին, թե ինչպես բուրժուազիան պատերազմ ել պատրաստում և պատրաստում է ԽՍՀՄ-ի դեմ և թե ինչպես այդ գործում նրան ոգնում են մենշևիկները (վոքանք իրենց սոցիալ-դեմոկրատ են կոչում):

Բայց չնայելով, որ այդ դավադրությունները բացված են, այնուամենայնիվ ռազմական հարձակման սպառնալիքը բոլորովին չի չեզոքացրած: Ընդհակառակն, ինքը բուրժուազիան խոստովանում է, որ հարձակումը միայն «տարեկետված է» (հետաձգված է): Իրականանում են Լենինի 1919 թվին ասած մարգարեական խոսքերը, թե Խորհրդային Միության և կապիտալիստական պետությունների խաղաղ կենակցությունը յերկարատև ժամանակով «անիմաստ է»: Զմոռանանք, «անիմաստ է»: Այսպես ասաց Վ. Ի. Լենինը, և իրոք այդպես ել է:

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ասածներից պարզ է, թե ինչ խնդիրներ են կանգնած մեր առաջ կապիտալիստական շրջապատվածության պայմաններում:

Նախ և առաջ մենք պետք է ամեն կերպ պաշտպանենք խաղաղությունը: Ամբողջ յերկրագնդի վրա կա միայն մի կառավարություն, որն իրոք և անկեղծությամբ ձգտում է խաղաղություն դա բանվորների և գյուղացիների խորհրդային կառավարությունն է: Մենք մի քանի անգամ առաջարկել ենք բոլոր բուրժուական պետություններին դինադադարվել, այսինքն՝ ցրել զորքը, խաղաղություն հաստատել: Բուրժուական կառավարությունները մերժեցին այդ: Այն ժամանակ մենք առաջարկեցինք բոլոր պետությունների սպառազինումը սահմանափակել միաժամանակ ու հավասարաչափ: Մեր թշնամիները մերժեցին և այս առաջարկը: Խոսքերով նրանք գոռում են խաղաղության մասին, գործով սատամ կրճատացնում իրար դեմ, դանակ սրում Խորհրդային Միության դեմ, գործով նրանք զինվում են: Բնորոշ է այն հանգամանքը, որ նրանց գինավորումը միշտ ել կատարվում է խաղաղության մասին նրանց դատարկախոսության հետ միասին: 1930 թ. ապրիլի 22-ին Իտալիայում կայացավ ծովային ուժերի զինադադարման միջազգային հանձնաժողովի նիստը: Շատ ճառեր ասվեցին այն մասին, թե շատ լավ կլիներ, յեթե «[illegible] լինեք խաղաղություն, և մարդկանց մեջ հաճություն»: Բայց դեռ կանֆերենցիայի պատգամավորներն իրենց անները չհասցրին մի-

36740-02

ջերիկական ծովում, որն զողողում է Ֆրանսիայի և Իտալիայի ափերը, սկսվեցին Ֆրանսիական ու Իտալական ռազմական նավատորմերի ռազմական գործողությունները (մանյովրանները). Ծովային հեկայական Թշնամիների բերանները կարծես թե ասում էին. «Զրույցն արիք, լավ, այժմ պետք է գործի անցնել, այսինքն՝ պատերազմի»: Ահա Կապիտալիստական կառավարությունների խաղաղության մասին բոլոր խոսակցությունների արժեքը:

Բոլորովին ուրիշ բան է մեզ մոտ: Մենք պաշտպանում ենք ամբողջ յերկրագնդի բոլոր աշխատավորների բարեկամությունը, մենք ինտերնացիոնալիստներ ենք: Մենք վոչ մի ոնտեսական շահագրգռություն չունենք հարձակվել ուրիշ յերկրների վրա, կողոպտել ուրիշ ժողովուրդների: Ինչի՞ յես պետք մեզ այդ: Մարդու ձեռքով մարդու կեղեքումը մեզ մոտ վոչնչացրած է, «զրայլի ազատությունը» դեպի շահը, նույնպես. մենք այնքան շատ բրստություններ ունենք, որ մոտիկ անցյալում ԺՏԳԻ-ին կից կայացած զիտական խորհրդակցության ժամանակ, գիտնականներն արդարացի կերպով զանգատվում էին, որ մենք դեռ ևս չգիտենք մեր բնական հարստությունները: Աշխարհի մեկ վեցերորդ մասի վրա, որը գրավում ենք մենք, ունենք ամեն ինչ՝ վորպեսզի սոցիալիզմ կառուցենք:

Ահա ինչու, յերբ մենք ասում ենք թե մենք կողմնակից ենք և պաշտպանում ենք խաղաղությունը, կառարյալ ճշմարտությունն ենք ասում, իսկ յերբ կապիտալիստները գայլի բերանով (յերբեմն) սկսում են խաղաղության սոխակի յերգեր յերգել, կեղծն ու սուտն ականջ է ծակում:

Մենք պաշտպանում ենք խաղաղությունը: Սա մենք վոչ միայն ասում ենք, այլ և ապացուցում մեր վարմունքի յուրաքանչյուր քայլով: Անցյալ տարի մենք յետ մղեցինք պատերազմի կրկնելու պրովոկացիան չինական սահմանի վրա. յետ մղեցինք, չմղեցինք պատերազմի մեջ քաշել ԽՍՀՄ-ին:

Մեր Թշնամիները չեն հանգստանում: Ընդհակառակն, ինչպես տեսանք վերը, նրանց ատելությունը դեպի մեզ ավելի սրվում է: Հարձակման սպառնալիքը կախվում է: Ի՞նչ անել:

Ընկ. Ստալինը Կոմունիստական Կուսակցության 16-րդ համագումարում արտասանած իր ճառում շատ դեղեցիկ արտահայտեց մեր դիրքը: Ընկ. Ստալինն ասաց.—«Վոչ մի թշնամի ոտար հողը մեզ չեն ուզում, բայց և մեր հողից վոչ մի վերջակ չենք տա վոչ վոքի»: Այս բառերի մեջ է միջազգային մեր քաղաքականության հյութը:

«Վոչ մի թշնամի ոտարի հող մենք չենք ուզում», այսինքն՝ մենք վարել ենք, վարում ենք և պետք է անշեղորեն վարենք խաղաղության քաղաքականությունը:

Բայց «վոչ մի վերջակ մեր հողից չենք տա վոչ վոքի», այսինքն, պետք է պատրաստ լինել յետ մղելու Թշնամիների հարձակումը և այնպիսի դաս տալ Թշնամիներին, որը նրանք այլևս չմտածեն հարձակման մասին:

Դրա համար ի՞նչ է հարկավոր անել:

Մեր Թշնամիներն ուզում են ինչ գնով էլ լինի ան՝ աջողության մատնել մեր հնգամյակը, որովհետև հասկանում են, որ տարեցց տարի մենք ուժեղանում ենք: Մեր խնդիրներն են՝ եղ ավելի արագ տեմպերով (ծամկետներով) կատարել հնգամյակը: Այդպես էլ վարվում են գիտակից բանվորներն ու աշխատավոր գյուղացիները: Հնգամյակը մենք կատարում ենք չորս տարում: Նավթի հնգամյակն արդեն կատարել ենք 2 և կես տարում: Իսկ հասկանալի յե թե ինչ նշանակություն ունի նավթը ժողովրդական տնտեսության համար: Կոլեկտիվացման հնգամյակը գյուղացիները—չքավորները, բատրակներն ու միջակները կատարեցին մեծ դեբաղանցումով՝ 2 տարում: Ահա մեր պատասխանը մեր Թշնամիներին:

Մեր Թշնամիները հույս ունեն մեզ հաղթել ռազմական ուժով: Մենք պատասխանում ենք. Կեցցե մեր փառապանծ Կարմիր բանակը, ծովային և ոդային Կարմիր նավատորմը: Մենք ամեն կերպ ամրացնում ենք Կարմիր բանակի մարտական հզորությունը, միջոցներ ենք հավաքում, վորպեսզի չինենք տավառնակներ, տանկներ, նույնիսկ ոդային գիգանտներ—դիրիժաբլներ: Սրանք այնպիսի հսկայական ոդային նավեր են, վորոնք առանց իջնելու կարող են թռչել Մոսկվայից՝ մինչև Վլադիվոստոկ, մինչև Թիֆլիս, մի խոսքով՝ մեր Միության մի ծայրից մյուսը ծայրը 3—4 որում: Սրանք այնպիսի գիգանտներ են, վորոնք կարող են համարյա մի գնացքի բեռի չափ բեռ բարձրացնել ու տանել:

Մեր Թշնամիները հույս ունեն մեզ հաղթել պատերազմի մարտերում: Իսկ մենք պատասխանում ենք.—ԽՍՀՄ-ի բոլոր աշխատավորներ, սովորեցեք յետ մղել Թշնամուն: Թշնամու դեմ վոչ միայն Կարմիր բանակն և կռվելու ճակատներում, այլ և բոլոր բանվորներն ու աշխատավոր գյուղացիները կգլխավորեն, ինչպես ան-

ցած քաղաքացիական պատերազմին, վորպեսզի յետ մղեն թշնամուն: Մենք ունենք մի կազմակերպություն, վորն իր առաջ հենց թնդերը և զրել ազգարնակությանը սովորեցնել պաշտպանություն: Դա Պաջը-ավիաքիմի 9 միլիոնանոց բանակն է: Այդ պատճառով գլխավորագույն խնդիրներից մեկն է այժմ, սմբացնել Պաջը-ավիաքիմի կազմակերպությունը, ստեղծել բջիջներ առանց բացառության բոլոր ֆաբրիկաներում ու գործարաններում, կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում:

Լենինգրադի բանվորներն այժմ, յերբ սրվել է պատերազմի վտանգը, վորոշել են կազմակերպել «գործարան-ամրոցներ», այսինքն, գործարանում աշխատանքն այնպես են դնում, վորպեսզի բոլոր բանվորները գլխովին Պաջը-ավիաքիմի անդամներ դառնան, բոլորը սովորեն ռազմական գործը, բարձրացնեն կազմակերպությունը, լինեն իսկական հարվածային: Այդպիսի գործարանը իրոք ամրոց է, վորին հաղթելն այնքան էլ հեշտ չէ թշնամու համար: Հարկավոր է, վոր գիտակից կոլտնտեսականներն ու գյուղացիները նույնպես սկսեն ստեղծել նման կոլտնտ-ամրոցներ, խորհտնտ-ամրոցներ. յուրաքանչյուր կոլտնտեսական-Պաջը-ավիաքիմի անդամ, յուրաքանչյուր Պաջը-ավիաքիմի անդամ—հարվածային լոզունգի տակ: Այն ժամանակ մեր քաղաքներն ու գյուղերը կծածկվեն այնպիսի ամրոցներով, վորոնց չի կարող վերցնել վոչ մի թշնամու ուժ:

Մեզ վրա հարձակվելու դեպքում, մեր թշնամիները հույս ունեն հենվել մենաշնորհի և նեպմանի վրա քաղաքում և կուլակի վրա՝ գյուղում: Մեր խնդիրն է արմատախիլ անել վնասաբարության բոլոր արմատները, պրագացնել սոցիալիզմի կառուցումը, վերցնել (վոչնչացնել) կուլակությունը վորպես դասակարգ, համատարած կոլեկտիվացման հիման վրա: Արդեն այս, 1931 թ. մենք կունենանք 50 տոկոսից վոչ պակաս կոլեկտիվացված տնտեսություններ: Ահա ինչու մոտիկ անցյալում կայացած Խորհուրդների VI համագումարը վորոշեց՝ այն անհատ տնտեսությունները, ինքվորն ու միջակը, վորն ոգնում է կուլակին կոլտնտ. շինարարության դեմ նրա մղած պայքարում, բանվոր դասակարգի բարեկամը չէ, այլ կուլակի պաշտպանը:

Իսկ ի՞նչ բան է սոցիալիզմի կառուցման արագացումը, արդյունաբերության աճումը, գյուղատնտեսության կոլեկտիվացումը, կուլակության վերացումը վորպես դասակարգ, համատարած կոլեկտիվացման հիման վրա, յերկրի պաշտպանունակության ամրացումը: Սա հենց նրանք են, վոր տոտալիզում է կոմունիստական կուսակցության գլխավոր (հիմնական) գիծը: Ահա թշնամուն խստորեն պահպանել լենինյան կուսակցության հիմնական գիծը, պայքարել թեքումների դեմ, աջ ոպորտունիզմի՝ վորպես գլխավոր վտանգի դեմ, նշանակում է ամրացնել յերկրի պաշտպանունակությունը, նշանակում է մեզ անհաղթելի դարձնել բոլոր թշնամիների համար:

Ահա ինչու մեր ներկա միջազգային դրության մեջ, պատերազմի վտանգի մեծանալու պայմաններում, բոլոր բանվորները, կոլտնտեսականներն ու աշխատավոր գյուղացիները, Խորհրդային Միության բոլոր աշխատավորները պետք է սերտ կերպով համախմբվեն կոմունիստական կուսակցության փառավոր դրոշի տակ, և կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի շուրջը: Այդ դրոշակների տակ մենք կկառուցենք սոցիալիզմը: Այդ դրոշակների տակ մենք կհաղթենք:

Ն. ԵԺՈՎԻ

ԳՐՈՊԱԳԱՆԴԻՍՏԻ ՓՈՔՐԻԿ ԵԶԸ

ԹԵՄԱՅԻ ԽՆԴԻՐԸ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ

ճառերն ու զարգացման ընթացքը, վորն աճում է կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի բաղայի վրա:

2. Ցույց տալ, վոր վտոզ կապիտալիզմը փորձում էր է հաղթել ԽՍՀՄ-ի յելք գտնել ճգնաժամից և այդ հողի վրա աճող հակասությունների, ինտերվենցիայի միջոցով:

3. Պարզել ինտերվենցիայի վտանգի աճման հետ կապված մեր առաջ կանգնած խնդիրները:

ԹԵՄԱՅԻ ՊԼԱՆԸ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ

1. Կապիտալիստական իրավակարգի հիմնական գծերը («զարգացած ազատություն դեպի շահը և կույր հետապնդում վաստակի յետևից» ահա կապիտալիստական զարգացման պատճառները):

2. Համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառները:

3. Բանվոր դասակարգի դրությունը (գործազրկություն, աշխատավարձ, բանվորական որ) և գյուղացիության աշխատավոր մասսան (ազրարային ճգնաժամ):

4. Հակասությունների աճումը բուրժուազիայի և պրոլետարիատի միջև (հեղափոխական վերելքը կապիտալի յերկրներում), գործազուրկների պայքարը, կոմինտերնի և նրա սեկցիաների ազդեցությունը, պրոլետարիատի հակահարձակումը:

5. Հեղափոխական շարժումը գաղութներում (գաղութների և կիսագաղութների աշխատավորության դրությունը, հակասությունների սրումն իմպերիալիզմի և գաղութների միջև, հեղափոխական-ազատագրական կռիվը Չինաստանում, Հնդկաստանում և այլն):

II. ԽՍՀՄ ՑԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

1. Ինչո՞ւ արվեց կապիտալիստների առելությունը ԽՍՀՄ-ի դեմ:

2. Սոցիալիստական շինարարության հաջողությունները համաշխարհային ճգնաժամի պայմաններում, միջազգային բուրժուազիայի թշնամության ուժեղացման պատճառները:

3. Ինտերվենցիայի պատրաստություն (հակախորհրդային բլոկներ ստեղծելը, անտեսական բոյկոտը, կամպանիա «խորհրդային դեմպինգ»-ի դեմ, զրպարտություններ պարտադիր աշխատանքի մասին, պապի արշավանքը, վնասարարության աջակցելը, պրովոկացիոն յելույթներ՝ հարձակումը, Չին-Արևելյան յերկաթուղու վրա, մահափորձ մեր առևտրական ներկայացուցչի վրա Ճապոնիայում, Գոլյանսկու դատավորությունը Լեհաստանում և այլն):

4. ԽՍՀՄ և կապիտալիստական յերկրները (մեր քաղաքականությունը, խաղաղության քաղաքականություն է):

III. ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՅԻ ՍՊԱՌՆԱԼԻՐԸ ՑԵՎ ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հիմնական խնդիրը—հնդամյակի յերրորդ տարվա պլանի իրականացումը, ցանքի բայլշևիկյան կիրառումը և կոլեկտիվացման պլանի իրագործումը, կուլակության վերացումը, վորպես դասակարգի, համատարած կոլեկտիվացման հիման վրա:

2. Յերկրի պաշտպանունակության ամրացման խնդիրները կարմիր բանակի մարտունակության ամրացումը, ԲԳԿԲ-ի չեֆությունը ծովային և ողային կարմիր նավատորմի չեֆն է:

3. Կոմյերիտմիությանն պարտավորությունները յերկրի պաշտպանունակության ամրացման գործում և չեֆությունը Կարմիր բանակի վրա:

ԴԱՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

1. Ստալին.—զեկուցում XVI համագումարում (I հատված)
2. Մոլոտով.—զեկուցում խորհուրդների VI համագումարում (I հատված)
3. Վորոշիլով.—XVI համագումարում արտասանած ճառը:
4. Եիտարով.—զեկուցում Համկեցեմ-ի IX համագումարում:

ՍՈՎՈՐԵԼՈՎ ԱՇԽԱՏԻՐ, ԱՇԽԱՏԵԼՈՎ ՍՈՎՈՐԻՐ.

Գործնական աշխատանքում գլխավոր ուշադրությունը պետք է դարձվի յերկրի պաշտպանունակության ուժեղացման միջոցառումների վրա: Կոմյերիտմիությունը պետք է ակտիվ կերպով մասնակցի ՊԱՋԸ-ավիաքիմի աշխատանքներին: Կոմյերիտմիությունը ծովային և ողային կարմիր նավատորմի չեֆն է: Համկեցեմ-ի IX համագումարի վորոշումները բոլոր կազմակերպությունների առաջ դրին ռազմական աշխատանքի ուժեղացման խնդիրը:

Ի՞նչ վարել և անել խմբակն այդ բնագավառում:

1. Ստուգել ՊԱՋԸ-ավիաքիմի բջիջի աշխատանքը: Ուսնկրն-

դիրքերի խումբը ծանոթանում է բջիջի աշխատանքին և մշակում գործնական առաջարկություններ կենդանացնելու ՊԱԶԸ–ավիաբիմի աշխատանքները, բջիջների շարքերը ներգրավել նոր անդամներ—կոլտնտեսականներ, անհատ–չքավորներ ու միջակներ: Առաջին հերթին պետք է իրագործվի հետևյալ լոզունգը—«ոչ մի կոմյերիտական ՊԱԶԸ–ավիաբիմի շարքերից դուրս: Ամբակին ինքը մտնում է ՊԱԶԸ–ավիաբիմի բջիջը և իր վրա վերցնում է ՊԱԶԸ–ավիաբիմի շարքերը մտնելու ագիտացիայի պարտականություններ (դրույցների, յերեկոների կազմակերպում, անհատական ագիտացիա և այլն):

2. Ռազմական աշխատանքն ուժեղացնելու մասին IX համագումարի վորոշման կատարումը: Ամբակը հանձն է առնում ռազմական գործն ուսումնասիրելու խմբակ ստեղծել (յեթե այդպիսին չկա խրճիթ–ընթերցարանին կից) և բոլոր կոմյերիտականներին ներգրավել նրա մեջ. կազմակերպում և յերեկո նվիրված ոգային նավատորմի շաբաթյանը:

Ընկ. Ստալինի հոդվածում յերկրի պաշտպանունակության ամրացման վերաբերյալ կան առանձին առաջարկություններ: Քննեցեք այդ առաջարկությունները պարապմունքի ժամանակ և մշակեցեք այդպիսիք կյանքում կիրառելու պլանը:

ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂԻՆ

Այս դրույցում պետք է լուսաբանվեն ԽՍՀՄ–ի միջազգային դրության վերաբերյալ հարցերը: Քո խնդիրն է կոնկրետ նյութերի հիման վրա (լրագրային հաղորդագրություններ) ցույց տալ ունկնդիրներին, վոր համաշխարհային անտեսական ճգնաժամը դրդում է իմպերիալիստներին պատերազմի և պատրաստվելու դեմ ուղղված հարձակում գործելու ԽՍՀՄ–ի վրա: Ամբողջ դրույցը պետք է նվիրված լինի այն մտքի պարզաբանմանը, վորն արտահայտել է ընկ. Ստալինը 16–րդ համագումարում՝ այն է.—«Բուրժուազիան յելքը փնտրում է պատերազմի մեջ, պրոլետարիատը հեղափոխության մեջ»: Մշակիր հոդվածը, ծանոթացիր նրա հիմնական յեղրակացություններին, առանձնացրու ընթերցողներ և անցիր՝ պարապմունքի կազմակերպմանը: Մինչ այդ հավաքիր ՊԱԶԸ–ավիաբիմի և կոմյերիտմիության բջիջների ռազմական աշխատանքի վերաբերյալ ամբողջ նյութը և ուղղագործիր դրույցդ ժամանակ: Կարելի է ընթերցանության վերջում լսել ՊԱԶԸ–ավիաբիմի բջիջի տեղեկությունները ձեր դյուղի աշխատանքի յերիտասարդության ռազմականացման աշխատանքների մասին:

Զրույցը պետք է կապված լինի լրագրի հետ: Զրույցի յուրաքանչյուր բաժին կարելի է պատկերավորել լրագրներից վերցրած նոր փաստերով, տեղեկություններով, հեռագրերով: Կարելի է հանձնարարել ունկնդիրների խմբին՝ հավաքել վերջին տասը տարվա լրագրներից տեղեկություններ ու կենդանի պատկերներ: Նախապես ծանոթացրու նրանց զրույցի հարցերին ու պլանին: Որինակի համար, խոսքը վերաբերում է գաղութների ճնշված ու հարբեցտահարված ժողովուրդների (ազգերի) պայքարին, Զինաստանի Կարմիր բանակի հերոսական կռվին: Այս տասնարյակի ընթացքում նոր տեղեկություններ են յերևան յեկել չինական Կարմիր բանակի պայքարի մասին: Քո կողմից առանձնացրած ընկերները լրագրներից կարում են այդ նկատողությունները և կարդում պարապմունքին:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ուսման հոդվածի յերրորդ գլխի վրա, վորը խոսում է ԽՍՀՄ–ի միջազգային դրության սրման հետ կապված մեր խնդիրների մասին: Մեր պատասխանն իմպերիալիստների վորոգայթներին—պայքարել խաղաղության համար, ամրացնել յերկրի պաշտպանունակությունը, Կարմիր բանակի մարտունակությունը, կատարել հնգամյակի յերրորդ վճռական տարվա պլանը:

Ամբակի պատասխանը՝ մոբիլիզացիայի յենթարկել դյուղի կոլտնտեսականների և աշխատավոր դյուղացիների մասսաներին՝ կատարելու և գերակատարելու գարնանացանի պլանը, կազմակերպելու նոր հոսանք դեպի կոլտնտեսությունները: Սրանք զրույցի հիմնական յեզրակացություններն են, վորոնց պիտի մոտեցնել ունկնդիրներին:

Հետևյալ զրույցը նվիրված է Կոմինտերնի և ԿԻՄ–ի աշխատանքին: Ընթերցանություն կազմակերպելիս նկատի ունեցեք այս:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՅՈՒԹ

ՆՐԱՆՑ ՄՈՏ ՅԵՎ ՄԵԶ ՄՈՏ

Այժմ տեսնենք, թե ինչ զրույցներ է մեզ մոտ, ԽՍՀՄ–ում և նրանց մոտ, կապիտալիստական յերկրներում:

Նշենք դլխավոր, հանրածանոթ փաստերը:

Նրանց մոտ, կապիտալիստների մոտ, անտեսական ճգնաժամ

և արտադրության անկում, ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության բնագավառում:

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, տնտեսական վերելք և արտադրության աճում ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում:

Նրանց մոտ, կապիտալիստների մոտ, աշխատավորության նյութական դրության վատացում, բանվորների աշխատավարձի նվազեցում և գործազրկության աճում:

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, աշխատավորության նյութական դրության վերելք, բանվորների աշխատավարձի բարձրացում և գործազրկության կրճատում:

Նրանց մոտ, կապիտալիստների մոտ, գործազուրկների և ցույցերի աճում, վորը միլիոնավոր քանվորական օրերի կորուստի պատճառ է դառնում:

Մեզ մոտ, գործազուրկների բացակայություն և բանվորների ու գյուղացիների աշխատանքի վերելքի աճում, վորը մեր պետությանը տալիս է միլիոնավոր լրացուցիչ բանվորական օրեր:

Նրանց մոտ, կապիտալիստների մոտ, ներքին դրության սրում և բանվոր դասակարգի հեղափոխական շարժման ծավալում կապիտալիստական ռեժիմի դեմ:

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, ներքին դրության ամրացում և բանվոր դասակարգի միլիոնավոր մասսայի համախմբում Խորհրդային Իշխանության շուրջը:

Նրանց մոտ, կապիտալիստների մոտ, ազգային հարցի սրում և ազգային-ազատագրական շարժման աճում Հնդկաստանում, Հնդկաչինում, Ինդոնեզիայում, Ֆիլիպյան կղզիների վրա և այլն, վորը փոխվում է ազգային պատերազմի:

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, ազգային յեղբայրության հիմքերի ամրացում, ապահովված ազգային խաղաղություն և ԽՍՀՄ-ի ժողովուրդների (ազգերի) միլիոնավոր մասսաների համախմբում Խորհրդային Իշխանության շուրջը:

Նրանց մոտ, կապիտալիստների մոտ, հուսալքում և դրության հետագա վատացման հեռանկար:

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, հավատ դեպի մեր ուժերը և դրության հետագա բարելավման հեռանկար:

Վերջապես՝ ԽՍՀՄ-ի «կործանման», կապիտալիստական յերկրների «ծաղկման» մասին: Ավելի ճիշտ չէ՞ լինի արդյոք խոսել նրանց անխուսափելի կործանման մասին, վորոնք ընկան անմատչելի ճգնաժամի այնքան «անապատների» ներքո, և դեռևս չեն կարողանում ազատվել անկման ցնցումներից:

Վորոնք են նրանց, կապիտալիստների այդ աստիճան լուրջ անհաջողությունների և մեր, ԽՍՀՄ-ի լուրջ հաջողությունների պատճառները:

Ասում են, վոր ժողովրդական տնտեսության վիճակը մեծամասամբ կախված է կապիտալների շատությունից կամ պակասությունից: Դա իհարկե ճիշտ է: Կապիտալիստական յերկրների ճգնաժամը և ԽՍՀՄ-ի վերելքը չէ՞ բացատրվում արդյոք մեր կապիտալների շատությամբ և նրանց կապիտալների քչությամբ: Զե, իհարկե չէ: Ամեն մեկին էլ հայտնի է, վոր մեր կապիտալներն ավելի քիչ են, քան կապիտալիստական յերկրներինը: Ցեղեր մեր մոտ ավելի քիչ են, քան կապիտալիստական յերկրներինը: Ցեղեր

Կարելի է պատճառը կապիտալիստական երկրների զեկուցագրերի անձնական հատկությունների մեջն է: Դարձյալ վոչ։ Ճգնաժամերը ծնվեցին կապիտալիզմի տիրապետության հաստատման հետ միասին: Ահա արդեն հարյուր տարուց ավել է, որ պարբերաբար կապիտալիզմի տնտեսական ճգնաժամեր են առաջանում, կրկնվելով ամեն 12,10,8 և ավելի պակաս տարիները մեկ անգամ: Կապիտալիզմի բոլոր կուսակցությունները, կապիտալիզմի շատ թե քիչ ականավոր գործիչները, սկսած ամենից «հանճարներից» մինչև միջակները, փորձեցին իրենց ուժերը ճգնաժամը «կանխելու» կամ «մեղմացնելու» համար: Բայց նրանք բոլորն էլ պարտվեցին: Ինչ կա զարմանալու, որ Հաուվերը ևս իր խմբի հետ պարտություն կրեց: Վոչ, բանը կապիտալիզմի զեկավարների կամ կուսակցությունների մեջ չէ, չնայելով, որ կապիտալիզմի թե զեկավարները և թե կուսակցությունները պատկաս նշանակություն չունեն այստեղ:

Ապա ինչո՞ւմն է բանը: Ի՞նչն է պատճառը, որ ԽՍՀՄ-ն, չնայելով նրա կուլտուրական հետամնացության, չնայելով կապիտալների պակասության, չնայելով անխնայելիորեն փորձված արտաքսական կարգերի սակավության, զարգանում է աճող տեմպերի վիճակում և վճռական հաջողություններ ունի տնտեսական շինարարության ճակատում, իսկ կապիտալիստական առաջավոր երկրները, չնայելով կապիտալների առատության, տեխնիկական կարգերի շատության և կուլտուրականության ավելի բարձր մակարդակին, զարգանում են աճող տնտեսական ճգնաժամի վիճակում և տնտեսական զարգացման բնագավառում պարբերություններ պարտության լեռներից են կրում:

Պատճառը մեր և կապիտալիստների տնտեսության տնտեսական սիստեմի տարբերության մեջ է. տնտեսության կապիտալիստական սիստեմի անկարողության մեջ, և այն առավելությունների մեջ, որ ունի տնտեսության խորհրդային սիստեմը, կապիտալիստական սիստեմի հանդեպ:

Ի՞նչ բան է տնտեսության խորհրդային սիստեմը:

1) Կապիտալիստների դասակարգի իշխանությամբ.

Տնտեսության խորհրդային սիստեմ նշանակում է, որ՝ վարած է և փոխարինված բանվոր դասակարգի իշխանությամբ.

2) արտադրության գործիքներ ու միջոցները, հողը, ֆաբրիկաները, գործարանները և այլն, խլված են կապիտալիստներից և տրված են բանվոր դասակարգին և գյուղացիության աշխատավոր մասսաներին, վորպես սեփականություն:

3) Արտադրության զարգացումը յենթարկված է վոչ թե մթցման և կապիտալիստական շահի ապահովման սկզբունքներին, այլ պլանային զեկավարության և աշխատավորության նյութական և կուլտուրական մակարդակի սիստեմատիկ վերելքի սկզբունքներին:

4) Ժողովրդական յեկամուտը բաշխվում է յերնելով վոչ թե շահագործող դասակարգերի և նրանց բազմաթիվ պարազիտ ծառաների հարստանալու շահերի տեսակետից, այլ բանվորների և գյուղացիների նյութական դրության բարձրացման և բազմազան գյուղում սոցիալիստական արտադրության ընդարձակման տեսակետից:

5) Աշխատավորության նյութական դրության սիստեմատիկ բարելավումն ու նրանց ապահովման անընդհատ աճումը (գնելու ունակությունները), լինելով արտադրության ընդարձակման մշտական աճող աղբյուր, ապահովում է բանվոր դասակարգին զանգվածային արտադրության ճգնաժամերից, գործազրկության աճումից և այլն:

6) Բանվոր դասակարգը յերկրի տերն է, որն աշխատում է վոչ թե կապիտալիստների, այլ իր սեփական դասակարգի համար:

Ի՞նչ բան է տնտեսության կապիտալիստական սիստեմը:

Տնտեսության կապիտալիստական սիստեմ նշանակում է, որ՝

1) Իշխանությունը յերկրում պատկանում է կապիտալիստներին.

2) Արտադրության գործիքներ ու միջոցները կենտրոնացած են շահագործողների ձեռքերում.

3) Արտադրությունը յենթարկված է վոչ թե աշխատավորական մասսաների նյութական դրությունը բարելավելու սկզբունքին, այլ կապիտալիստական բարձր շահի ապահովման սկզբունքին.

4) Ժողովրդական յեկամուտը բաշխվում է յերնելով վոչ թե աշխատավորության նյութական դրությունը բարելավելու, այլ կեղեքիչների առավելագույն շահն ապահովելու տեսակետից.

5) Կապիտալիստական ռացիոնալացումը և արտադրության արագ աճումը, վորի նպատակն է ապահովել կապիտալիստների

մեծ ուժասները, հանդիսանում և վորպես խոչընդոտ՝ աշխատավորության միլիոնավոր մասսաների մուրացիկ գրության և նյութական ապահովության իջեցման, վորը միշտ ել հնարավորություն չունի բավարարել իր պահանջները, թեկուզ ծայրահեղ մինիմումի սահմաններում, վորը և անխուսափելիորեն հող և պատրաստում գերարտադրության անխուսափելի ճգնաժամերի և գործազրկության աճման համար.

6) Բանվոր դասակարգը չահագործվող դասակարգ և, վորն աշխատում է, վոչ թե իրեն, այլ ուրիշ դասակարգի, շահագործողների դասակարգի համար:

Սրանք են տնտեսության խորհրդային սիստեմի առավելությունները կապիտալիստական սիստեմի հանդեպ:

Սրանք են տնտեսության սոցիալիստական կազմակերպության առավելությունները կապիտալիստական կազմակերպության հանդեպ:

Ահա վորտեղ և նրա պատճառը, վոր մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, կա աճող տնտեսական վերելք, իսկ նրանց մոտ, կապիտալիստների մոտ, աճող տնտեսական ճգնաժամ:

Ահա թե ի՞նչն է պատճառը, վոր մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, մասսաների սպառման աճումը (դնելու ունակություն) տալիս անցնում է արտադրության աճմանը և հրում նրան առաջ, իսկ նրանց մոտ, կապիտալիստների մոտ, ընդհակառակն, մասսաների սպառման աճումը, (դնելու ունակությունը) յերբեք չի հասնում արտադրության աճմանը և միշտ յետ է մնում նրանից և գրանով ճգնաժամերի պատճառում արտադրությունը:

Ահա թե ի՞նչն է պատճառը, վոր այնտեղ, կապիտալիստների մոտ միանգամայն բնական և հասկանալի ճգնաժամերի ժամանակ այրել, վոչնչացնել «ավելորդ մնացած» ապրանքներն ու դյուրագտնելիական մթերքների «ավելցուկները», վորպեսզի գրանով պահեն բարձր գներն ու ապահովեն բարձր շահույթները, այն ժամանակ, յերբ մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, նման հանցանք գործողներին դժոխոց կուղարկեին:

Ահա թե ի՞նչն է պատճառը, վոր նրանց մոտ, կապիտալիստների մոտ, բանվորները գործազուրկ են անում և ցույցեր սարքում, կազմակերպելով հեղափոխական պայքար դատության ունեցող կապիտալիստական իշխանության դեմ, այն ժամանակ, յերբ մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, մենք տեսնում ենք այն միլիոնավոր բանվորների և գյուղացիների վիթխարի աշխատանքային մրցակցությունը, վորոնք պատրաստ են սեփական կրծքերով պաշտպանել Սոցիալիստական Իշխանությունը:

Ահա թե վորտեղ և ԽՍՀՄ-ի ներքին գրության հաստատությունն ու ամրությունը և կապիտալիստական յերկրների ներքին գրության անհաստատությունն ու խախտումությունը:

(Ստալին—Լենինիզմի հարցերը· էջ 663-668).
(И. Сталин—Вопросы ленинизма, стр. 663—668).

500·000 ՍՏՐՈՒԿ «ԱԶԱՏ» ԱՄԵՐԻԿԱՑՈՒՄ

Սկսենք ցիտատներ բերելով «Հարավային վայրամթերման մեծ կոմպանիայի» պատասխանատու ծառայողներից մեկի վիճակագրությունից (կոմպանիայի հիմնական ձեռնարկը գտնվում է Բոստոնում Լուիզիանայի նահանգ):

«Այս կոմպանիայի վճարած դիվիդենտները արտասովորված են նպաստների արյունով ու պայքարով», գրում ենք բանվորների շահագործման մասին, այդ կոմպանիային պատկանած վայրամթերման գործարանի նախկին վարպետ Ցե. Ս. Ռասելը: Նա հաղորդում է, վոր կոմպանիային պատկանած փոքրիկ քաղաքը մի կատարյալ ֆեոդալական ամրոց է, և կոմպանիայի վարձու գինվորագրված պահակն ամեն ուրբաթի մեջ ենթարկում բանվորներին: Ներկայումս ել կոմպանիան նույն միջոցներով և ուժերով աշխատում է: « Рабочие и лес » աշխատության հեղինակ Շարլոտա Տոդը նկարագրելով «Կիրբի վայրամթերման կոմպանիա»-ին պատկանող կիրբիտուն քաղաքի (Տենեսսում) բանվորների կյանքի ու աշխատանքի պայմանները, գրում է.—

«Հետաքրքրությունը ցույց տվեց, վոր կոմպանիան աշխատավարձը վճարում է «ապրանքային չեկերի» ձևով, վորոնք քննդնվում են միմիայն բնակարանային վարձի և այլ ապրանքների համար, վոր գնվում են կոմպանիային պատկանող խանութներից: Աշխատավարձն անկանոն է վճարվում, հոսանքի բանվորներն ստիպված են աշխատավարձ ստանալու համար 6 ամիս սպասել: Բանվորների ամենափոքր խոսքության անդամ անմիջապես խեղդվում է կոմպանիայում ծառայության մեջ գտնվող «գեստապոյի» յերկաթե թաթով»:

Կոմպանիային պատկանող այդ քաղաքներում դիրքապահությունը տալիս են ամուսնացած և ընտանիքավոր բանվորներին, վորովհետև ընտանիքավոր բանվորները միշտ ել պատրաստ են մնում

կոմպանիային: Ցերեկ նման բանվորը փորձում է թողնել ծառայությունն առանց կոմպանիայի խանութի պարտքը վճարելու, նրան բանտ են նետեցնում կոմպանիան «Թալանելու» փորձի համար:

Սարկաստիկության այդ սխեմանը գոյություն ունի վաղ միայն փայտասպրոցման բնագավառում, այլև քարածուխի և պղնձի հանքերում և անգամ ել պողպատաձուլման արդյունաբերության մեջ:

Ահա թե ինչպես են նկարագրում փայտամթերման բանվորները իրենց նամակներում կյանքի պայմանները.—«Բարակները հին են և մելիոնավոր բաղլինշներ (փայտոջիլներ) վխտում են այնտեղ, («Անկախ փայտամթերման կոմպանիա». Վաշինգտոն):

Ահա թե ինչ է ասում մի ուրիշ նամակ.—«Մենք բնակվում ենք (Իդահոյում) 20-ական հոգով 16×20 ֆոտ տարածություն ունեցող խրճիթներում: Սենյակներում անտանելի գարշահոտություն է տիրում թաց շորերից, դուլպաներից և շապիկներից, որոնք փռված են վառարանի շուրջը: Աշխատելով սառը լեռնային հեղեղների ափերին, մենք ամեն որ մինչև վոսկորներս թրջվում ենք»:

Իսկ ահա թե ինչ է գրում «Միացյալ փայտամթերման կոմպանիայի» (Կալիֆորնիա) բանվորը.—«Մեզ ասելիս են ամենատժան անունդը, որի համար ստիպված ենք վճարել որակած 1 դոլար 20 ցենտ: Այս գումարը կանոնավոր կերպով հանվում է մեր ամեն որվա աշխատավարձից, անկախ նրանից, թե մենք այդ որն ստացել ենք այդ կերակուրներից, թե վոչ: Տնտեսության վարիչը պարզևներ և ստանում այն գումարներից, որոնք նա կարողացել է «խնայել» կոմպանիայի համար: Կիսակուշտ անունդից քայքայվում է բանվորի ուժն ու առողջությունը:

Կապիտալիստները ի՞նչպես են իշխանությունն իրենց ձեռքը պահում այդ ստրկական քաղաքներում, յերբ այնտեղ բռնկվում է ապստամբություն: Այդ հարցի պատասխանը կարելի է գտնել Բաղդասի փայտասպրոցման բանվորների մթերքի արխիվից վերցրած հետևյալ հաղորդագրություններից.—«Կենտրոնական բանվորական միության նախագահի տեղակալ Ռոբինսին դուրս արին Բոդալուսից: Նեգրերի կազմակերպիչ Սոլ Դակուսի կյանքը միքանի անգամ վտանգի է ենթարկվել, բայց նա շարունակում է աշխատել: Միանգամ, նրա բացակայած ժամանակ, նրա բնակարանի պատերը ծածկվել են գնդակներով. կրակել են «Հավասարության Լիգա»-ի անդամները (անահարբուրախիլներ), գինված պահակներին խմբի գլխավորությամբ, որը բնակվում է «Հարավային փայտամթերման մեծ կոմպանիայի» մոտ: Նրանք ջարդ ու փչուր արին նաև նրա բնակարանում ունեցած կահկարասին ու լուսամուտները, դուրս շպրտեցին: Դակուսն հաջողվեց թաղնվել մարդասպաններից դուրս շպրտելուց: Դակուսն հաջողվեց թաղնվել մարդասպաններից, միքանի որ նա թաղնված մնաց ճահիճներում: Վերադառնալով, նա գնաց միության չենը, պաշտպանություն խնդրելով սպիտակ կազմակերպիչ Լում Վիլյամսից. իրրև պահակ նրան տվին յերկու ուժեղ և զինված սպիտակ բանվորներ: Հենց վոր նա հեռացավ միության չենից, սուլեց գործարանի սուլիչը՝ կանչելով կոմպանիայի վոստիկանությանը: Կոմպանիայի վոստիկանները գնացին միության չենը և գնդակահար արին Լում Վիլյամսին, վորը դրանից առաջ հրաժարվել էր կաշառք վերցնել կոմպանիայից, և գործարանի յերկու բանվորի: Նրանք վիրավորեցին նաև յերկու բանվորի, վորոնցից մեկը, գանվելով հարձակմանը մասնակցող բժշկի «ինամքի տակ», մեռավ: Այդ սպանության համար վոչ վոք պատասխանատվության չենթարկվեց»:

Բացի կոմպանիային պատկանած քաղաքներից, հարավային նահանգներում գոյություն ունի բանտարկյալների աշխատանքն ոգտագործելու սիստեմը:

Բանտարկյալների աշխատանքն ոգտագործելու մի մեթոդ կիրառվում է Ալաբամայում, Ֆլորիդայում և այլն, վորտեղ անանցանելի հանցագործությունների համար դատապարտված թե նեգր և թե սպիտակ բանվորներին ուղարկում են փայտամթերման և սկիպիդարի պատրաստելու համար խեժ հավաքելու, մեկ տարի 29 որով: Նրանք աշխատում են կատարյալ հրեշ վերակացուների հսկողության տակ, վորոնց միակատար իշխանության տակ է գտնվում բանտարկյալի կյանքն ու մահը: Հաճախ է պատահում, վոր դուրսն ազատության մեջ ծանոթ-բարեկամ չունեցող բանտարկյալները աշխատում են 3-5 տարի, վորովհետև վերակացուները իրենց իշխանությամբ յերկարացնում են սկզբնական դատավճիռը: Ցերեկ բանվորը չկատարի կարգադրությունները, կպատժվի ծեծով: Բանտարկյալներին ստիպում են իրար ծեծել աղջիկի մեջ թրջած կաշվե ձանր մտրակով: Շատերին, մանավանդ նեգրերին, ծեծում են սպանելու չափ: Շատերին գնդակահարում են, չատերը մեռնում հիվանդություններից ու քաղցից:

Բանտարկյալների աշխատանքն ոգտագործելու մի ուրիշ մեթոդ կայանում է նրանում, վոր այդ դժբախտներին աշխատանքի թողնում են նրանում, վոր այդ դժբախտներին աշխատանքի չեն հանձնում մասնավոր կապիտալիստներին: Այդ մեթոդը գոր-

ծաղրվում է, որինակի համար, քարածխային հանքերում Ալբամայում և Միսիսիպիում՝ վայրամթերումների վրա։ Այստեղ բանվորների հետ վարվում են նույն վայրենի խստությամբ։ Բանտարկյալները կոպեկ չեն ստանում իրենց աշխատանքի համար։ Նրանց ընտանիքներին նույնպես վոչ մի ոգնություն ցույց չի տրվում։

Ցեթե հաշվի առնենք կոմպանիայի քաղաքներում բնակվող ֆերմերների, կապալառուների մոտ աշխատող բանվորների, ինչպես նաև հարավում, ստրկական պայմաններում աշխատող գյուղատնտեսական բանվորների աշխատանքը, վորտեղ կալվածատերը հենվելով նահանգի վարչության և լինչի որենքի վրա, ոգտվում է ստրկացնելու միևնույն մեթոդներով, ինչ վոր խոշոր արդյունաբերող—կապիտալիստները, և վերջապես բանտարկյալների աշխատանքը, առանց չափազանցնելու կարելի է ասել, վոր ամենաքիչը 500·000 ամերիկական բանվորներ ապրում և մեռնում են կատարյալ ստրկության պայմաններում։

ԳՈՐԾԱՐԱՆ—ՏԱՃԱՆԱՆՈՑ

Մեր գործարանն ամենամեծ մանածագործական ձեռնարկություններից մեկն է Լեհաստանում, վորը կոչվում է Վիձևի մանուֆակտուրա։ Վիձևը Լոձի արվարձանն է։ Սեղոնի ժամանակ մեզ մոտ աշխատում են 9 հազարից ավել մանածագործներ։

Վիձևի մանֆակտուրայի տերն է Ոսկար Կոնը։ Նա միաժամանակ գործարանի գլխավոր դիրեկտորն է, իսկ մնացած դիրեկտորները—նրա տղաներն ու ազգականներն են։ Բայց գործարանի գլխավոր տերերն անգլիացիք են, վորոնք մեծ գումարներ են ներդրել այդ գործում։

Լեհաստանում որենքով սահմանված է 8 ժամյա բանվորական որ, սակայն դա հենց ենպես, տեսքի համար է և մնում է թղթի վրա։ Իրականում ամբողջ Լոձում, ինչպես նաև մեզ մոտ, Վիձևում, սեղոնի ժամանակ աշխատում են որական 10–12, նույնիսկ 16 ժամ առանց ընդմիջումի։ Արտաժամյա իսարկե մենք չենք ստանում։ Ցերիտասարդները, կանայք ու յերեխաները (մեզ մոտ աշխատում են 12–14 տարեկան յերեխաները) գործարանում աշխատում են որական 10–12 ժամ։

Գործարանում աշխատանքի պայմանները տաժանելի յեն։ Աշխատում ես այնպես, վոր շունչ քաշելու ժամանակ չի լինում, իսկ քեզ շտապեցնում են։

Մեր աշխատավարձը մի քիչ բարձր է, քան Լոձի մյուս գործարաններում. մենք գործավարձով ենք աշխատում։ Վորակյալ բանվորներն ու բանվորուհիներն ստանում են որական 5–ից 10–ը ռուբլի, այսինքն 1–2 ռուբլի։ Իր կահավորությամբ Վիձևի մանուֆակտուրան առաջնակարգ է համարվում։ Առաջնակարգ է նաև բանվորներից ու բանվորուհիներից ամբողջ հյութը քամելու գործում։ Ցեվ Ոսկար Կոնն իր զավակների հետ ու մեզ անհայտ հեռավոր տերերը—անգլիական կապիտալիստները, միլիոններ են դիզում մեր աշխատանքով։

Մեզ մոտ առանձնապես դժվար են ապրում կանայք, վորոնք գործարանում մեծամասնություն են կազմում։ Բանվորուհիները լքված, հավիտյան ահարեկված, տանջված և քայքայված են իրենց ուժից վեր աշխատանքից։ Ընտանիքավորները յերբեմն որերով չեն վերադառնում։ Չե՞ վոր տաժանելի աշխատանքից հետո հարկաւոր է տունը հավաքել, մաքրել, լվալ, յերեխաներին խնամել։

Մեզ մոտ, գործարանում ճաշարան չկա։ Ցկան նաև մսուր, մանկապարտեզ։ Ինչպես յերևում է այդ բանը շատ թանգ կնստեր մեր արդյունաբերողներին։ Բայց սպորտային ակումբի համար, վորն ավելի թանգ արժե քան մսուրը, փող չեն խնայում։ Նման առատաձեռնությունը հասկանալի է։ Չե՞ վոր գործարանային սպորտային ակումբը յերիտասարդությանը յետ է պահում դասակարգային պայքարից։ Ակումբի համար դրամ է բաց թողնում նաև կարգային պայքարից։ Ակումբի համար դրամ է բաց թողնում նաև գիտությունը, վորովհետև դինվոր և պատրաստում պան Գիլսուդսկու բանակի համար։ Իզուր չե, վոր այդ ակումբում ֆիզկուլտ պատրաստությունների գեկավարը վոստիկանության պաշտոնյա է։

Մեզ մոտ շատ են հիվանդներ և հղի կանայք։ Որենքով հղի կանանց հանում է 3 ամսվա արձակուրդ, 6 շաբաթ ծննդաբերությունից հետո, աշխատանքից ազատ, 6 շաբաթ ծննդաբերությունից հետո, աշխատանքի վարձի պահպանումով։ Սակայն յեթե բանվորուհին արձակուրդ և խնդրում, նրան կամ արձակում են, կամ թե այլևս աշխատանքի չեն ընդունում ծննդաբերությունից հետո։ Դրա համար էլ հղի բանվորուհիներն իրենց յերեխայի հետ փողոցում չմնալու համար արձակուրդից չեն ոգտվում։

Վարպետի աշխատանքից չարձակվի, բանվորուհին թաղցնում է իր հղիությունը։ Մինչև վերջին բոպեն նա կանգնում է դաղդյահի առաջ և գործարան վերադառնում ծննդաբերությունից դեռ չկաղդուրված։ Մեզ մոտ հաճախ է պատահում, վոր բանվորուհին վայր է ընկնում դաղդյահի առաջ և պառկում ինչպես մեռած,

ուշադրություն կամ զարմանքի մեջ։ Կկանչեն չտնտղ դգնությունը, բանվորուհուն տուն կտանեն, իսկ վաղը շարժյալ նա դպրոցական առաջ է։ Շոտայ ոգնությունը լոմում չափազանց լատ է աշխատում. որական 125 անգամ կանչում են նրան կամ մեր, կամ Լոմի միյուս գործարանները։ Դժբախտ դեպքերը շտապելու, գերհոգնածության և քայքայվածության պատճառով չափազանց շատ են։ Որինակ մի քանի դեպք։

Վիշնի մանուֆակտուրայի բանվորների մի մասը բնակվում է գործարանային տներում։ Այնտեղ սանիտարական պայմանները այնպես են, որ բանվորական բնակարանները հետազոտելուց հետո, մեր դիրեկտոր Կոնին յենթարկեցին պատասխանատվության և գատապարտեցին միքանի որվա բանտարկության։ Մենք ասրանքացանք, որ նա գոնե մի քիչ բանտ կնստի, բայց վոչինչ դուրս չեկավ։ Նա սպառնաց, որ յեթե իրեն նստեցնեն, գործարանը կփակի։ Ցեվ դատավճիռը թեկանեցին։ Լեհական Իշխանությունները կարազանում են խիստ վարվել բանվորների հետ, իսկ այնպիսի տուգերի առաջ, ինչպիսին է Կանը, յեռին թաթերի վրա յեն մաղ ցանում։

Ցեվ ինչեր ասես չեն մոածում տերերը, խելքս մեպանից այն չէին իրավունքները, որ մենք ձեռք ենք բերել։

Որենքով մեզ հասնում է տարեկան 2 շաբաթ արձակուրդ, բայց դիրեկտորը կազմում է այն բանվորների ցուցակը, որոնց արձակուրդի ժամանակը մոտենում է և այդ ցուցակով արձակում ոգնց պաշտոնից։

ՈՎ Է ԱՂՆԻԼԻ ԼԱՎԸ

Լոսմ ես, ընկեր, թե վորտեղից են լավում այս վայրենի, մութեգին աղաղակները։

— Կնցցե Լեհաստանը։

Լոսմ ես հարյուրավոր, հազարավոր տղամարդկանց ու կանանց, ծերերի ու յերիտասարդների ձայները, վորոնք հորինում են յերկու բառից բաղկացած այս բարբարոսական մեղեդին։

— Կնցցե Լեհաստանը։

Սա մի քանի մանրամասնություններ այդ քոամների պատմությունից։

Բոբրուվի դավառի Գրանիլ գյուղում, պատմիչ ջնկատի գինվորները ծանր ծեծեցին գյուղացի Մ. Վնորուվին և իրամայեցին յուրաքանչյուր հարվածից հետո գոռալ «Կնցցե Լեհաստանը»։

Նույն դավառի Գորոդիոլավիչ գյուղում յերեկվա 14-ը Ուլյանյան գնդի պատժիչ ջոկատը։ Ամենապես խլեցին գյուղացիներից էլոր ստանալի պարարները։ Ավերեցին ընթերցարանը։ Սպանելու չափ ծեծեցին շատ գյուղացիներ, որոնց թվում 70 տարեկան ծերունի Միկոլ Կաֆտանին և յերկու կնոջ։ Բռնաբարեցին մի ժամկահանակ աղջկա։ Ծեծված գյուղացիներին իրամայեցին քանել մեկ մեկու յերեսի, լսիրշ խոսքերով հայհոյել Ուկրայինային և գոռալ՝ «կնցցե Գիլսուդսկին»։ Հավաքեցին աղջիկներին և ստիպեցին նրանց համբուրել վոստիկանական պաշտոնյաների կոշիկները։

Լեհական ֆաշիստների հասարակ լեղվով սա կոչվում է հայրենասիրություն Ուկրայինայի «պացիֆիկացիա» և նախընտրական կամպանիա։

Այս տարվա հոկտեմբերի 10-ին, ներքին գործոց մինիստրության ականավոր պաշտոնյա պան Սոսնենյոկը հայտնեց ոտարերկրյա թերթերի ներկայացուցիչներին։

— Հարավային Ուկրայինայի պացիֆիկացիան վերջացած և հրաման է տրված յետ կանչելու այնտեղից պատժիչ ջրջանները։

Պան Սոսնենյոկը բարեհաճեց ասել։ Նրա այդ հայտարարությունից հետո գերմանական և անգլիական «Ինդիներ Տագրրլատ» և «Մանչեստեր Գարդին» լուրերի թերթերի թղթակիցները, որոնք յեկել էին Հարավային Ուկրայինայում, հնարավորություն ունեցան իրենց թերթերին հաղորդել պանական վոճի մի քանի նոր գեղեցկություններ։

Գեորիկով գյուղում բանաստեղծ Շեվչենկոյի ակարը, որը կախված էր ընդերցարանում, ժանդարմները կեղտոտուց չունեցան։ Գեորիկով գյուղացիներին համբուրել այդ ակարը։ Ծաստ գյուղացիներին ծեծեցին։ Նրանցից մեկին, Մատվեյ Միխրենին, ծեծեցին սեռական որգանները նրա համար, որ նա ջանդին, ծեծեցին սեռական որգանները նրա համար, որ նա ջանկացավ անվայել խոսքեր ասել Ուկրայինայի հասցեին։

Աշնավարտ դահիճները սկրում են իրենց անվանել «պատանեք» Ստրհրդային Միությունում և Ցեվրուպայի մյուս։

Մեր մտքան է,—հայտարարում են նրանք, կոնցներ յեվրոպական քաղաքակրթության և կուլտուրայի պաշտպանության համար։

Դուք հասկանում եք, բայց ինչպիսին դարբարոսներ և կոպիտ մարդիկ են, կարող են վորևե կերպ խեթ նայել քաղաքակրթությանը, և ահա նրանք—լեհական ժանդարմները, ասածում, գոտեն

կարելի և ուրիշ յերկնային բնակիչների կողմից կոչված են պահպանելու և պաշտպանելու քաղաքակրթությունը:

Մեր վահենա, Փարիզյան պալատների պարոններ, յեվրոպական քաղաքակրթության պաշտպանությունը հանձնված է հավատարիմ և հուսալի մարդկանց: Հանդիսատես ենք: Յեվրոպական քաղաքակրթության անմեղությունը պահպանում է «Կորզաբ»-ի հեղինակի նկարի վրայի կեղտոտությունները:

Լեհական սեյմի ընտրությունները պետք է ամրացնեն հպատանները», պետք է բարձրացնեն արժանի Լեհաստանի մի քանի տերերի հեղինակությունը: Ծնված Մատվեյի Միտրենդուի համար լավ կլինեն Փարիզի բանկերը: Ուկրայինական բանաստեղծի նկարի վրայի կեղտոտությունները ֆաշիստական վայրուտա չե:

Յեվ տասն յակ հազարավոր ծնված Միտրենդներ ամբողջ ուժով ազատակում են, որտից արյուն գնալով գոռում.

— Կեցցե Լեհաստանը:

Մեր առաջ է կարմիր շապկով մի փոքրիկ գրքույկ, ուկրայիներեն լեզվով, վորը հրատարակվել է Լվովում վերջին ժամանակներս: Կարմիր շապկով այդ գրքույկը բաղկացած է 32 էջից, վորի 7 էջը յուսանկարներ են:

Վոչ մի դատողություն: Վոչ մի ընդհանրացում: Միայն փաստեր: Փաստերի չոր ու ցամաք թվարկում: Հարավային Ուկրայինայի վերջին դեպքերի քրոնիկա: Քրոնիկա և յուսանկարներ:

Սովորական այսպիսի դեպքերում ասում են.

— Կարդում ես ու չես հավատում, մի՞թե.....

Վոչ, հավատում ենք, Մենք չենք հավատա, յեթե այդ կերպ լիներ: Խորհրդային Ուկրայինայի և Բելորուսիայի բանվորներն ու գյուղացիները հիշում են լեհական լեգիոնների ավազակային հարձակումները: Յեվրոպական քաղաքակրթության այդ պաշտպանները չարունակում են իրենց սիրած գործը: Լեհաստանի հեղափոխական բանվորներն ու գյուղացիները կարող էին, ի լրումն այդ գրքույկի, բերել հարյուր հազարավոր նման փաստեր:

Արագ կերպով նայում ենք այդ կարմիր գրքույկը:

«Լվովի գավառի Պոդբերեզցա գյուղում պատժիչ արշավախմբի զինվորներն սպանելու չափ ծեծեցին մի գյուղացու նրա համար, վոր նրա ազգանունը Մոսկվա էր»:

«Լվովի մոտ, Գայ գյուղում պատժիչ արշավախումբը հակայական կոնտրիբուցիա գրեց գյուղացիների վրա, ավելից ընթերցարանը, այրեց կոոպերատիվը: Բոլոր գյուղացիներին, ում

վոր ոնեանում էին ժանդարմները, ծեծում էին: Բռնեցին գաչտում աշխատող Տարաս Ստրեցվին, Գրինա Զակալիկին, Ստեֆան Զասաուղիկուն և Դանիել Սորոկին, կապեցին նրանց ձիերին և ամբողջ ուժով էշեցին:

Վերջացնելով նախընտրական կամպանիան այդ չրջանում, պատժիչ արշավախմբի ագենտները առաջ շարժվեցին:

«Պոդդորոգիչչա գյուղում զինվորական ջոկատն ավերեց ընթերցարանն ու կոոպերատիվը: Նավթ ածեցին գյուղացու հագուստիկի ամբարի վրա և այրեցին: Շատ գյուղացիների մտրակներով ծեծեցին: Յերբ ծեծվողները կորցնում էին գիտակցությունը, ասում էին ածում նրանց վրա և նորից ծեծում»:

«Միխովիչի գյուղում ժանդարմներն սպանելու չափ ծեծեցին յերիկու գեղջկուհու: Շատ գյուղացիների ծեծեցին (30-ից մինչև 90 մտրակի հարված): Այնուհետև հավաքեցին գյուղի բոլոր կանանց, կարգադրեցին հանվել և այդպես մերկ էշեցին նրանց փողոցներով, հարկադրելով անամոթ խոսքեր ասել Ուկրայինայի հասցեներով, հարկադրելով անամոթ խոսքեր ասել Ուկրայինայի հասցեներով»:

Յուրաքանչյուր ջոկատ աշխատում էր դերազանցել մյուսին: Տեղի էր ունենում նախընտրական մրցություն.

— Ո՞վ է ավելի լավը: Ո՞վ ավելի արտիստիկորեն ու դեպարտիզանորեն կծադրի Հարավային Ուկրայինայի աշխատավորությանը:

«Մշանա գյուղում արշավախմբերի պետը բոլոր գյուղացիներին հավաքեց ընթերցարանի մոտ: Կարգադրեց բոլորին ամբողջապես մերկանալ: Այնուհետև հերթով յուրաքանչյուրին վաթսուն մտրակներով ծեծում»:

«Ռեկիլինեց գյուղում ժանդարմները ծեծված գյուղացիներին գետակն էին գցում հայտարարելով. «Դող լվանան իրենցից հեղափոխական վարակը»:

Արյունը հոսում է գյուղից գյուղ: Զքավորների խրճիթներում և փոքրիկ հյուղերում մահվան ճգնաժամի մեջ պարկած են տանջված ու հալածանքով ուռած մարդիկ:

Այս փոքրիկ գրքույկի յուրաքանչյուր էջը գոռում է, աղաղակում: Ամբողջ ժողովրդի ծնունդ ու տանջանքը կատարվում է «քաղաքակրթության» աշխարհի աչքի առաջ: Ո՞ւր են դիանականների, դրողների, հումանիստների (մարդասերների), քաղաքագետների բողոքները:

Չի կարելի ապրել, չի կարելի գոռալ: Ամբ սա «պատանչ» է:

ռոպական քաղաքակրթության սահմանագլուխ պահակն է ֆոլշևիկներից։

Ջենտլեմենն է՛ր։ Սա պարլամենտարիզմ է։ Սա դեմոկրատիա է։ Սա սեյմի ընտրությունների համար պատրաստվել է։ Սա քաղաքակրթությունը պաշտպանել է։ Ահա այս արյունոտված մարմինների վրայով ֆաշիստական բլոկը հպարտ քայլերով սեյմ անցավ։

Ցեվ ժանդարմներն աշխատում են։

—Մի՛վ և ավելի լավը։

ՀԵՏԵՎՈՒՄ ԵՆ ԼԵՆԻՆԻ ՑԵՎ ԼԻԲԿՆԵԽՏԻ ՏՐԱԴԻՑԻԱՆԵՐԻՆ

Պրոլետարական յերիտասարդական շարժմանը վոստիկանության կողմից հետապնդելը նպաստում է, վորպեսզի ուժեղացվի պրոլետարական յերիտասարդության հեղափոխական յեռանդը, ուժեղացվի նրա մարտական վճռողականությունը, կրկնապատկել նրա պատրաստությունը պայքարի համար։

Վոստիկանական այդ արկելումներն ավելի համոզեցուցիչ կերպով, քան աղիտացիոն ճառերն ու հոդվածները, ցույց են տալիս Գերմանիայի միլիոնավոր յերիտասարդ բանվորությանը, թե վորքան մեծ և տիրող դասակարգի սարսափը հեղափոխական յերիտասարդության մասսայական շարժման հանդեպ։

Գերմանիայի կոմունիստական յերիտասարդությունը կանգնած է այնպիսի խոշոր պատմական խնդիրների առաջ, վորպիսի խնդիրների առաջ հեղափոխական յերիտասարդության շարժումը չի կանգնել նույն իսկ պատերազմի ժամանակ։

Վիճակագրական վերջին տվյալների համաձայն գործ ունեցող յերիտասարդ բանվորների թիվը (14–20 տարեկան) Գերմանիայում 1925 թ. հասնում էր 4,785,111-ի։ Յերիտասարդ բանվորները կապիտալիստական ռացիոնալացման ճնշման տակ ստանում են անսովոր ցածր աշխատավարձ, ունենալով անսովոր բանվորական օր։ Կոմունիստական յերիտասարդությունն այստեղ շատ բարենպաստ հող ունի պրոպագանդի համար։ Մերտ կոնտակտի մեջ լինելով հեղափոխական արհմիութենական ոպոզիցիայի, կարմիր գործարկոմների, կարմիր պրոֆմիությունների հետ, կոմյերիտմիությունը պետք է ամրանա ձեռնարկներում և յուրաքանչյուր ձեռնարկ վերածի կոմունիստական յերիտասարդական աղբեցության պատվարի։

Մեծ է յերիտասարդ գործազուրկների թիվը։ Գերմանիայում այժմ 800,000 է։ Միայն Բերլինում 400,000 գործազուրկներից 25 %-ը, այսինքն 100,000-ից ավելին կազմում է 14–21 տարեկան յերիտասարդությունը։ Հենց այստեղ էլ հարկավոր է գործի անցնել։ Որովհետև բոլորը նորակոչիկներ են, վորոնց պետք է հավաքել (հավաքագրել) կոմունիստական և հեղափոխական յերիտասարդության շարքերը։

Ընդդեմ բանվորական պարհակի, ընդդեմ նպաստի կրճատման և հացի ու աղատության համար պետք է կռվի կոմունիստական յերիտասարդությունը։ Հենց այստեղ էլ հարկավոր է գործի անցնել։ գուրկներին և աշխատող յերիտասարդ բանվորներին։ Կառավորությունն սպառնում է բարձրացնել ընտրական տարիքը, վորպեսզի դրանով ընտրական իրավունքից զրկի ձայնի իրավունք ունեցող միլիոնավոր յերիտասարդ բանվորների։ Նա հույս ունի այդպիսով թուլացնել յերիտասարդական հեղափոխական շարժումը։ Նա սխալվում է։

Կոմյերիտմիությունն իր դրոշակի տակ ավելի կխտացնի այն յերիտասարդությանը, վորին սպառնում են զրկել ընտրական իրավունքից։

Կոմյերիտմիությունը պետք է կատարի իր վրա դրած պատմական խնդիրները։ պայքարի ռեակցիոն, ֆաշիստական մարտական յերիտասարդական միությունների դեմ, և պրոլետարական հեղափոխության բանակի համար դրավի յերիտասարդ բանվորական մասսաներին, վորոնք սխալմամբ ընկել են ֆաշիստական կազմակերպությունների մեջ։

Սոցիալ-դեմոկրատական մասսայական կազմակերպությունը պետք է քայքայվի և կքայքայվի վորպես մասսայական կազմակերպություն։ Հենց այժմ էլ նրա ազդեցությունն ամենանվազն է մասսաների վրա։ Շուտով սոցյերիտը կչանչանվի մինչև վերջը։

Գերմանական կոմյերիտմիությունը հետևելով Կարլ Լիբկնեխտի և հեղափոխական յերիտասարդական շարժման հեղափոխական տրադիցիաներին, հարատացած պրոլետարական դասակարգային պայքարի մասին Լենինի տեսական ու գործնական ուսմունքով, և ազատագրծելով ընկ. Ստալինի ղեկավարությամբ ԽՍՀՄ-ի և կոմկուսակցության վերջին տարիների ստացած փորձը, մասնակցում է ճնշված, հարստահարված դասակարգի պայքարին։

ՎԻԼԼԻ ՄՅՈՒՆՅԵՆԲԵՐԳ

ՑՈՒՐԱՖԱՆՉՑՈՒՐ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՊԵՏՔ Ե ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԻ ԱՄԵՆ ՐՈՊԵ ՑԵՏ ՄՈՂԵԼՈՒ ՄԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ

Գարանայք կապիտալիստները վախենում են նրանից, որ մեր յերկիրը տնտեսական և կուլտուրական տեսակետից չափազանց բուռն և չեղած տեմպերով և աճում: Այս բանը նրանց ահ ու սարսափի մեջ է գցում: Նրանք վախենում են տնտեսական բազայի վիթխարի, չտեսնված աճումից, աշխատավորական լայն մասսաների քաղաքական գիտակցությունից, որոնք կառուցում են իրենց կյանքը, իրենց կուլտուրան ու եկոնոմիկան միանգամայն նոր հիմունքներով: Այս բանը նրանց կատաղեցնում է, սրանից նրանք վախենում են, որա հետ հաշտվել չեն կարողանում: Այս բոլորին պետք է ավելացնել այն ճգնաժամը, որը մենք տեսնում ենք բոլոր կապիտալիստական, թե արդյունաբերական և թե ագրարային յերկրներում:

Այս բոլորն անխուսափելիորեն ստիպում են կապիտալիստներին յելք փնտրել պատերազմի մեջ:

Կապիտալիստական սիստեմի համար ամբողջ չարիքը նրանք տեսնում են աշխարհում միակ սոցիալիստական պետության մեջ: Դրա համար նրանք իրենց առաջին հարվածը, իրենց դենքն ուղղում են մեր պետության դեմ: Իսկ մենք պետք է ուղղակի ասենք, որ յեթե մեր յերկիրը դեռ այն ժամանակ, յերբ նոր ելք ծնվել, յերիտասարդ, չամրապնդված, կարողացավ յետ մղել բոլոր զինված հարձակումները, ապա այժմ գործն այնպես է, որ յեթե բանն են տեղը հասնի, մենք վոչ թե յետ կմղենք այնպես, ինչպես են ժամանակ, յերբ մեզ խփում եյին, իսկ մենք պաշտպանվում, այլ այժմ մենք կխփենք բոլոր նրանց, ովքեր կմտածեն հարձակվել մեզ վրա, և այնպես կխփենք, որ այլևս վորձ չանեն նրանք այդ բանն անելու: Պետք է դաս տալ:

Մեր արևմտյան սահմանակից պետությունների զինված ուժերը աճում են կատաղի տեմպերով: Դուք գիտեք, որ կապիտալիստական յերկրներում ճգնաժամը վերաբերում է արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանը, իսկ ռազմական արդյունաբերության մեջ ճգնաժամ չկա: Կապիտալիստական պետություններում ամբողջը կենտրոնացած է ռազմական տեխնիկա, կռվի և մարդուն խեղդելու միջոցներ ստեղծելու վրա: Այս բոլորից ի՞նչ ենք յեզրակացնում: Այն, որ կապիտալիստները այնպես են պատրաստվում պատերազմի, որ մարդկային վոչ մի սերունդ դեռ այնպես չի պատրաստվել, պատերազմի յին պատրաստվում հատկապես նրա համար,

վորովհետև ժամանակակից պայմաններն ու հանգամանքներն այնպես են, որ կապիտալիստներն իրենց համար ուրիշ յելք չեն գտնում:

Կապիտալիստները պատերազմի յեն պատրաստվում: Մեզ համար կավոր է, որպեսզի ամենապայծ մասսաներն իմանան, որ առաջին հերթին հարվածի սրությունն ուղղված է մեր կողմը: Այդ պատճառով, միաժամանակ այն բոլորի հետ, որ մենք կատարում ենք հսկայական պատմական խնդիրներ սոցիալիզմ կառուցելու և հընդամենը չորս տարում կատարելու առաջադիմում, անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր բանվոր, կոլտնտեսական և վողջ աշխատավորական մասսաները, որոնք կոչված են սոցիալիզմ կառուցելու և իրականացնելու, պատերազմ կարողանան վարել մեր վրա պատերազմ փաբաբելի: Կարող է պատահել մեզ պատերազմի դաշնակ հակառակ խաղաղության այն քաղաքականությունը, որը մենք վարում ենք: Դուք արդեն փորձերը տեսաք, տեսաք առաջին փորձնական քայլերը—հարձակումը Չինարևելյան յերկաթուղու վրա: Դուք տեսաք, որ մնատարարները միջազգային կապիտալի գործակալներն են, նրանք մշակել եյին մեր պետությունը վոչնչացնելու պլանը, վորոշել եյին այդ անել 1930 թ., իսկ հետո հետաձգեցին 1931 թ: Հարկավոր է որ յուրաքանչյուր աշխատավոր գիտենա այդ, պատրաստ լինի ամեն րոպե յետ մղելու մեր թշնամիներին: Սակայն, յերբ ասում ենք, թե մենք կպաշտպանվենք, սա չի նշանակում, թե կսեսնենք սահմանի վրա և կպատանք թե գալիս են մեզ վրա թե չեն գալիս, իսկ յեթե գալիս են, ապա մենք նրանց յետ կշպրտենք և նորից կպատանք: Մենք կխփենք, և այնպես կխփենք, ինչպես յերբեք դեռ չենք խփել բուրժուազիային: Կխփենք բանվորագյուղացիական, ամբողջ ուժով, այնպես, որ յերկար կես լինի:

Թույլ տվեք ձեզ և հանձն ձեր՝ մեր յերկրին, որը սոցիալիզմ է կառուցում, հայտարկել հեծելազորային բոցավառ վողջույն, մեր բանվորագյուղացիական Կարմիր հեծելազորից:

(Ուորոշիլովի VI համագումարում ընկ. Բուդյոննու արտասանած ճառից):

800 ՁԵՌՆԱՐԿ ԳՐԱՎՎԱԾ Ե ԿՈՄՑԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

1930 թ. սեպտեմբերի 14-ին ռեյխստագի ընտրություններից հետո նացիոնալ-սոցիալիստներն ստիպված յեղան խոստովանել, որ մինչև այժմ իրենք ուժեղ ազդեցություն չունեն գործարանա-

յին յերիտասարդության վրա և վոր իրենց չի հաջողվում ընդարձակություններ մտցնել հեղափոխական յերիտասարդության շարքերում։

Դրա համար Գիտլերը հրաման տվեց «Գիտլերյան յերիտասարդության» միությանը, վորի մեջ, նա ի միջի այլոց, պահանջում է գանգիլիոսաբար առաջադրել յերիտասարդության համար այնպիսի պահանջների ծրագիր, վորի հետ չկարողանան մրցել կոմունիստները»։ Նրանով և բացատրվում հրամանը—ուժեղացնել ձեռնարկներում նացիոնալ-սոցիալիստական բջիջներ կազմակերպելու աշխատանքները։

Ձեռնարկներում պրոլետարական յերիտասարդության վրա ֆաշիստական ազդեցություն գործելու յերկրորդ և վոչ պակաս կարևոր միջոցը գործադրվում է անմիջականորեն ձեռնարկատերերի կողմից, վորը և պաշտպանվում է սոցիալ-դեմոկրատիայի և ռեֆորմիստական արհմիութենական բյուրոկրատիայի կողմից։ Համարյա գերմանական բոլոր ձեռնարկներում, վորտեղ մեծ թվով պրոլետարական յերիտասարդություն կա, գոյություն ունեն գործարանային սպորտային միություններ։ Այնտեղ, վորտեղ մեծ թվով յերիտասարդներ կան, փորձեր են արվում հիմնելու ֆաշիստական սպորտային միություններ, կատարվում են մարմնամարզական վարժություններ, ֆուտբոլի խաղեր, ընդհանուր զրոսանքներ և այլն։ «Գինտա» կազմակերպությունը, հատկապես Ռուրի ավազանում, հանդիսանում է ձեռնարկներում յերիտասարդության վրա ֆաշիստական ազդեցություն գործելու առաջնորդն սպորտի միջոցով։ Յերիտասարդությունը ձեռնարկներին ամրացնելու փորձեր են արվում։ Ձեռնարկատերը հսկողություն է նշանակում յերիտասարդության ազատ ժամանակի վրա։ Սակսոնիայում ձեռնարկներ կան, վորտեղ գոյություն ունի այսպիսի կարգ։ գործարանային աշակերտներն ու ծնողները պարտավոր են ձեռնարկատերերին հաղորդել այն մասին, թե յերիտասարդ բանվորն ինչպես է անցկացնում իր ազատ ժամանակը։ Աշխատում են յերիտասարդության դաստիարակել չարեկիրքեվերության և ֆաշիզմի վոգով։ Գործարկոմների սոցիալ-դեմոկրատ անդամները և ռեֆորմիստական արհմիութենական բյուրոկրատները ամեն կերպ աջակցում են այդ փորձերին։ Այնուամենայնիվ կապիտալիստների և նացիոնալ-սոցիալիստական և սոցիալ-դեմոկրատական լագերից նրանց լաքեյների պլաններն այնքան էլ հեշտ չեն հաջողվում։

Գերմանական կոմյերիմիությունն այժմ բոլոր ձեռնարկնե-

ում անց է կացնում գործարկոմների ընտրության մարտական կամպանիա։ Մենք խնդիր ենք դրել մեր առաջ, վորպեսզի կարողանալ 80% ձեռնարկներում կարմիր թեկնածուական ցուցակներով «Հացի և աշխատանքի համար» լոզունգի տակ, գործարկոմ անցնեն պրոլետարական յերիտասարդության ներակայացուցիչները։ Ձեռնարկներում պրոլետարական յերիտասարդության մոբիլիզացիան՝ գործարկոմների ներկա ընտրությունների ժամանակ՝ անցնում է աշխատավարձի իջեցման դեմ գործադուլներ և պայքար նորմակերպելու լոզունգի տակ։

Ներկա մոմենտում աշխատավարձի իջեցման դեմ մղվող պայքարն ամենակարևոր խնդիրն է։ Մարտ ամսվա ընթացքում յերկրի արդյունաբերական բոլոր շրջաններում մոտ 6 միլիոն բանվոր յենարդյունաբերական բոլոր շրջաններում մոտ 6 միլիոն բանվոր յենարկվում է ձեռնարկատերերի հարձակման, վորոնք ձգտում են աշխատավարձն իջեցնել 10—15 %-ով։ Աշխատավարձի իջեցմանից զատ ուժեղանում են գործարանային աշակերտները և յերիտասարդ բանվորներն ու բանվորուհիները։

Աշխատավարձի իջեցման դեմ պայքարի լոզունգի տակ մենք մոբիլիզացիայի յենք յենթարկում յերիտասարդությանը հակաֆաշիստական հարձակման համար ձեռնարկներում։ Յերիտասարդության գործադուլները խիստ են ձեռնարկատերերին և նրանց ադմինիստրացիային, այսինքն՝ նացիոնալ և սոցիալ ֆաշիստներին։ Սա հաստատվեց նրանով, վոր միայն մեր ջանքերի շնորհիվ հաջողվեց գործադուլի մեջ քաշել Բերլինի մետաղագործների 1000 գործարանային աշակերտների։ Ռուրում կոմյերիմիությունը կարողացավ գործադուլի մեջ քաշել նույնիսկ մեզ թշնամի կազմակերպությունների պատկանող յերիտասարդությանը։ Զբաղեցնելով Ֆոկլանդում (Սակսոնիա) միջանի որ առաջ, յերիտասարդ բանվորուհիները կոմյերիմիության ղեկավարությամբ հաղթությամբ վերջացրին այնտեղի ելեկտրոտեխնիկական ձեռնարկներում աշխատավարձի իջեցման դեմ կազմակերպած գործադուլը։

Այն շարժումը, վորն ընդգրկել է յերիտասարդությանը հակաֆաշիստական համագումարներ կազմակերպելու և անցկացնելու ժամանակ և աշխատավոր յերիտասարդության համաշխարհական VI հավաքի (Բերլինում) կազմակերպման գործում, լավագույն ապացույցներն են այն բանի, վոր պրոլետարական յերիտասարդությունը ձեռնարկներից մեզ հետ և դալիս և վոր մենք կհաղթենք աշխատավարձի իջեցման և ֆաշիզմի դեմ մղվող պայքարում։

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԲԱՆՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՌԱՅԻՈՆԱԼԱՑՄԱՆ ՃԻՐԱՆՆԵՐՈՒՄ

12 ԺԱՄՅԱ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՕՐ

Գերմանիայում գոյություն ունի պարտադիր աշխատանքի պարհակ, այսինքն՝ գործադուրկներին հարկադրում են (նպաստից զրկելու սպառնալիքի տակ) նվազագույն վարձատրությամբ կատարել այն աշխատանքը, որը նրանցից կպահանջի կոմունալ վարչությունը։

Որինակ կբերեմ, թե այդ աշխատանքն ինչպես և անցկացվում գործնականում։

Առաջին միջոցը, դա մասնագիտության փոփոխությունն է, որն հատկապես կիրառվում է հաճախ յերիտասարդության նկատմամբ, որին ստիպում են աշխատել գյուղում։ Միամսյա կամ յերկամսյա դասընթացներից հետո յերիտասարդ բանվորներին ամենից հաճախ ուղարկում են Արևելյան Պրուսիա կամ Պոմերանիա։

Այն պայմանները, որոնց մեջ ապրում և աշխատում է յերիտասարդությունը, հնարավոր չե նկարագրել։ Ամսական 15 մարկով մարդիկ ստիպված են աշխատել օրական 12 և ավելի ժամ։ Կատարյալ աշխատանքի միջնադարյան պայմաններ։

Վ. ԲԵԿԿԵՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՀԱԿԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հինգ միլիոն գործադուրկներ, նրանցից միլիոնից ավելին յերիտասարդներ, ահա կապիտալիստական ռացիոնալացման հետևանքները Գերմանիայում։

Նացիոնալ-սոցիալիստներ և նացիոնալիստները, որպես բուրժուազիայի նեկրայացուցիչներ, առաջարկություն մատրին աշխատանքային պարհակի մասին, որին յենթակա յեն 17—21 տարեկան յերիտասարդները։

Ընդլայնով, որ այդ առաջարկությունը մերժվեց, այնուամենայնիվ յերիտասարդ գործադուրկների նկատմամբ գործադրվում են վրդովեցուցիչ միջոցառումներ։

Որինակ՝ Պոտսդամում քաղաքային համայնքը չավելացնելով նպաստը, յերիտասարդ գործադուրկների համար մատրեց աշխատանքային պարհակ։ Շաբաթական յերեք անգամ, նրանք պետք է 4 ժամ ծառեր կտրեն և այլն, և շաբաթական յերեք անգամ 4 ժամ

լսեն բուրժուական և ֆաշիստական ագիտատորների դատարկախոսությունները։

Ֆրանկֆուրտի շրջանում յերիտասարդ գործադուրկներին ստիպում են աշխատել շաբաթական 45 ժամ (անտառապետության մեջ և քաղաքի սալհատակները նորոգելու վրա) առանց բարձրացնելու նպաստն, այսինքն շաբաթական 7 մարկով։

Սա որինականացած աշխատանքային պարհակ է։ Սրա իմաստն ու նպատակը վոչ թե գործազրկության դեմ պայքարն է, ինչպես փորձում է հավատացնել բուրժուազիան, այլ միանգամայն հակառակը։

Գործադուրկների համարյա անվճար պարտադիր աշխատանքի հետևանքով, աշխատանք ունեցող բարոմաթիվ պրոլետարներ անպետք են համարվում և փողոց շպրտվում։

ՅՆԿԿՆԻ

ԱՂԲԱՏՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱԿ

Քանի վոր սովորած բանվորն ավելի ցածր աշխատավարձ է ստանում, քան վորակյալ բանվորը, ուստի ձեռնարկատիրոջն ավելի ձեռնտու յե ունենալ վորքան կարելի յե շատ սովորած բանվորներ։ Այդ բանին նա հասնում է հետևյալ միջոցով, «գործ չլինելու» պատրվակի տակ, արձակվում են վորակյալ բանվորները։ Յեվ հենց իսկույն, արձակելուց հետո նրանց հայտարարում են. «վորպես վորակյալ բանվոր մենք ձեզ պահել չենք կարող, յեկեք աշխատեցեք վորպես սովորած բանվոր»։ Մնում է ընտրություն անել գործազրկության և քիչ աշխատավարձի միջև։

Յերիտասարդ բանվորները նշանակալից չափով քիչ աշխատավարձ են ստանում, քան հասակավոր բանվորները։ Հաճախ այնպես է պատահում, վոր յերիտասարդ բանվորից հետո այդ նույն աշխատանքն ստիպված է կատարել հասակավորը նույն գնով, ինչ յերիտասարդ բանվորը։ Հաճախ այսպիսի դեպքերում ավագ բանվորներն ստանում են շաբաթական 20–30 մարկ (10–15 ռուբլի)։

Շատ հաճախ աշխատանքի դրությունը դատարկ հնչյուն է։ Բանվորները վախենում են արձակվելուց և տուն են բերում աղքատիկ աշխատավարձ։ Այսպիսով պարզ է, վոր կապիտալիստական Գերմանիայում անասելի կարիքի մեջ գտնվող գործադուրկները, այլ և աշխատողների մեծամասնությունը

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ

ՀԱՅԿՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կապիտալիստական Գերմանիայում հրեշավոր չահագործման ձևերից մեկն էլ տանն աշխատելն է։ Առավոտվա ժամի 6-ից մինչև գիշերվա 12-ը բանվորուհիներն իրենց յերեխաների հետ նստած են նեղ, խեղդված բներում, վորտեղ արևի ճառագայթ անգամ չի թափանցում, և աշխատում են ամբողջ շաբաթը 16-18 մարկով (8-9 ռ.), վորպեսզի վաստակեն իրենց աղքատիկ անուղդի համար։

Բերլինում շատ և տարածված նաև յերեխաների աշխատանքը։ Այստեղ աշխատում են 8 հազարից վոչ պակաս յերեխաներ, վորոնցից 349-ը նախադպրոցական հասակի։ 633 յերեխա օրական աշխատում են 4 ժամից ավել, 120-ը՝ 6 ժամից ավել։ Ուրիշներն աշխատում են կիրակի որերը։ Որինակի համար, կարտաբանից տանում են ճամբուղների ծանրոցները (բաղաժը) և հաճախ այդ ծանր աշխատանքի համար ստանում 20 պֆեննիգ (10 կոպ.)։

Վորովհետև ծնողներն ի վիճակի չեն յերեխաներին տալ լավ անուղդ և կյանքի լավ պայմաններ, ուստի մենք տեսնում ենք, վոր Բերլինում յերեխաների 14,8% ուժասպառ են, 13% գեղձախտավոր, 20,4% թոքախտավոր։

ՏՐՈՒԴԱ

ՀՀ Ազգային գրադարան
NL0411161

ЧИТАЛ. ЗАЛ ЧИТ. (6-44)

Инф 1
№ 2

МЕЖДУНАРОДНОЕ ПОЛОЖЕНИЕ СССР

Госиздат ССР Армении
Эривань—1921